

# ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ (1918-1946)

Յակոբ Չոլաքեան  
hagopcholakian@hotmail.com

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆ ՈՒ  
ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ 1918-1939ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Համաշխարհային Ա. Պատերազմի ասարտին օսմանեան զօրքերը քաջուեցան Մերձաւոր Արեւելքի արաբական տարածքներէն ու Կիլիկիայէն: Օսմանեան բանակի պարտութեան մէջ հիմնական դերակատարութիւն ունեցաւ նաեւ Ֆրանսայի դրօշին տակ կազմուած Արեւելեան Բանակը, որուն հինգ հազար զինուորներուն մեծամասնութիւնը կը կազմէին կիլիկեցի հայերը: Իրաք, Յորդանան, Պաղեստին, Եգիպտոսի Փոքր Սայիտի գաղթակայան ու Սուրիոյ ամբողջ տարածքին ցրուած հայ վերապրողները, սկսան կամաց-կամաց վերադառնալ հիւսիսային Սուրիոյ եւ Կիլիկիոյ ազատագրուած շրջանները, ուրկէ տարագրուած էին անոնք 1915ին: Տունդարձը ցամաքի ու ծովու ճամփաներով տեւեց մինչեւ 1920: Ատանայի մէջ կազմուած Ազգային Միութեան մասնաճիւղեր սկսան գործել գրեթէ բոլոր ազատագրուած շրջաններուն մէջ: Ասոնք կը կազմակերպէին վերադարձողներուն տեղաւորման, ապրուստի ու ապահովութեան խնդիրները: Այսուհանդերձ, բազմահազար վերապրողներ ցրուած կը մնային Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ. անոնք կ'մ փրկութեան կը սպասէին, կ'մ ալ համակերպած էին իսլամանալու գաղափարին: Պատերազմէն անմիջապէս ետք սկսաւ վերապրող հայերը հաւաքելու ու փրկելու աշխատանքը:

1922ին ֆրանսացիներն ու թուրքերը որոշեցին պետական նոր սահմաններ, որով Ֆրանսան Թուրքիոյ զիջեցաւ Կիլիկիան եւ պատմական Սուրիոյ հիւսիսային շրջաններ: Տեղի ունեցաւ իրենց տուն ու տեղին վերադարձած հայ բնակչութեան երկրորդ հոսքը Սուրիա: 5 Դեկտեմբեր 1924ին Ֆրանսան յռաջացուց Սուրիական Պետութիւնը՝ Հալէպի եւ Դամասկոսի 'պետութիւն'ներու միաւորումով: Ալեքսանտրէթի Սանճաքը մտաւ 'Սուրիոյ Պետութեան' կազմին մէջ՝ պահպանելով հանդերձ իր «յատուկ ռեժիմ»ը<sup>1</sup>:

Սուրիական պետութեան այս սահմաններէն ներս հայ վերապրողներու տեղաւորումը սկսաւ պատերազմի ասարտէն անմիջապէս ետք ու անցաւ չորս փուլերէ.

**1. Առաջին փուլ.**– Օսմանեան զօրքերու հեռացումէն անմիջապէս ետք, 1918ի վերջաւորութեան, տարագրութեան ճամփաներէն սկսան տուն վերադառնալ վերապրողներէն անոնք, որոնց շրջանները ազատագրուած

էին Արեւելեան Բանակին կողմէ: Հոս նկատի ունինք յետոյ Սուրիական Պետութեան սահմաններէն ներս մտնող շրջանները: Այսպէս՝

**ա.- Պէլլանի շրջանակ,** որուն մէջ կը մտնէին Պէլլան, Սովուք Օլուք, Կիւզելլի, Ֆարթըլլի, Քանլը Տերէ, Քըշլա Տերէսի, Նարկիզլիք, Աթըք եւ այլ մանր գիւղեր: Ասիկա առանձին գաւառակ մը կը հանդիսանար իր տոհմիկ հայութեամբ: 1915ին տարագրութեան մեծ զոհեր կու տայ այս շրջանակը: Պատերազմէն ետք վերապրողներ կը վերադառնան ու կը վերականգնեն իրենց գիւղերը:

Այս շրջանակին մէջ պայմանականօրէն կը մտնեն նաեւ Ալեքսանտրէթ ու Գրըզխան քաղաքները, որոնց տուեալները տրուած են առանձին<sup>2</sup>:

**բ.- Սուեռիա,** որուն մէջ կը մտնէին Հաճի Հապիպլի, Պիթիաս, Եողուն Օլուք, Խտրպէկ, Վաքըֆ, Քեպուսիէ գիւղերը: 1919ին իրենց գիւղերը կը վերադառնան Մուսա Լեռան հերոսամարտէն ետք Փոր Սայիտ տեղափոխուած մուսալեռցիները, ինչպէս նաեւ տարագրութեան ելած հայրենակիցներէն վերապրողները: Ազգային Միութիւնը կը հսկէ վերականգնումի աշխատանքներուն:

Այս շրջանակին մէջ կը մտնէ նաեւ Անտիոք քաղաքը, որուն տուեալները սակայն առանձնաբար կը տրուին: Անտիոքի հին գաղութէն սակաւաթիւ վերապրողներ եղած են: Նոր գաղութը կը կազմուի յաջորդ փուլին<sup>3</sup>:

**գ.- Լաթաքիա** եւ անոր մօտիկ **Արամօ** եւ **Ղնեմիէ** գիւղերը: Լաթաքիա կը նստէր սաղիմապատկան վանքի եւ Հոգետան տեսուչ վարդապետը, որ նաեւ կը վարէր Անտիոքի Թեմի կաթողիկոսական փոխանորդի պաշտօնը: Վերապրող տեսուչ Մովսէս Վրդ. Ոսկերիչեան 1919ի ամռան կը վերադառնայ իր աքսորավայրէն: Հին գաղութէն հատուկենտ վերապրողներ կը վերադառնան: Լաթաքիոյ նոր գաղութը կը ձեւաւորուի երկրորդ եւ չորրորդ փուլերուն:

Արամոյի եւ Ղնեմիէի տոհմիկ հայութենէն վերապրողները նոյն շրջանին կը վերադառնան ու կը վերապրեցնեն իրենց գիւղերը<sup>4</sup>:

**դ.- Քեսապի շրջանակ,** որուն մէջ կը մտնէին հայաբնակ Քեսապ, Գարատուրան, Պաշորտ, Սեւ Աղբիւր, Ներքի Գիւղ ու Խայիթ, Չինար, Չաքալըք, Տուգաղաճ, Քէօրքիւնէ, Էքիզօլուք, Վերի Պաղճաղազ, Վարի Պաղճաղազ ու Չաթալլէք, մասամբ հայաբնակ Տեսթիւր գիւղերը: 1915ին տարագրութեան մեծ զոհեր կու տայ այս շրջանակը: Վերապրողները իրենց տուն ու տեղին կը վերադառնան 1918ի վերջերէն մինչեւ 1920: Անիշխանութիւն է. վերապրողները ստիպուած կ'ըլլան ինքնապաշտպանական մարտեր մղել շրջակայ թուրքմէն գիւղերէն յարձակումներ կազմակերպած քեմալական ուժերու դէմ: Ազգային Միութիւնը եւ զինուորական իշխանութիւնը կացութեան տէր կ'ելլեն՝ մինչեւ 1922, երբ ֆրանսական իշխանութիւնները շրջան կը մտնեն<sup>5</sup>:

**ե.-** Ճսրը Շուղուր ասանի մօտիկ **Եագուպիէ** ու **Գնիէ** արաբախօս գիւղերը: Հոս տարագրութեան հրամանը չի հասնիր, սակայն 1917ին այս

երկու գիւղերուն բնակիչները կը պարպեն իրենց բնակարանները եւ կ'ապաստանին շրջանի արաբ գիւղերը: Կը վերադառնան ֆրանսական իշխանութիւններու շրջան մուտք գործելէն ետք:

**գ.-** Քիւրտ Տաղի վրայ՝ **Արֆալի** գիւղը. Մեծ Եղեռնէն ետք նոյն շրջանակին մէջ չվերականգնեցան Եամատի, Կոչի (Կէօչի), Արմանճօ, Գոնտունա, եւ Վերին Թընզըրի գիւղերը: Պոտամայի սարահարթի Պսապըթ, Գոմղայա, Մեշթէ, Այն-ըլ Հոր գիւղերը 1904էն ետք չեն յիշատակուիր: Մեծ Եղեռնին բոլոր հայերը կը տարագրուին: Զինադադարէն ետք կը վերականգնի միայն Արֆալի գիւղը տասնեակ մը ընտանիքներով<sup>6</sup>:

**է.-** Վերակազմաւորուեցան **Հալէպի, Դամասկոսի եւ Տէր Զօրի** նախկին գաղութները: Ասոնք չէին տարագրուած, բայց հոս գրաւուած էին հասարակական շէնքերը, միջոցները, եղած էին ձերբակալութիւններ: Ամբողջ պատերազմի տեւողութեան այս քաղաքներուն մէջ հաստատուած էին մեծաթիւ գաղթակայանները, ուր պարբերաբար տասնեակ հազարաւոր հայեր կը բերուէին ու այդ տեղերէն կը քշուէին անյայտ ուղղութիւններով: Զինադադարէն անմիջապէս ետք այս գաղութներու նախկին հայերը վերակազմակերպուեցան ու հսկայական դեր կատարեցին վերապրողները յայտնաբերելու, ազատագրելու եւ տեղաւորելու գործին մէջ:

Վերոնշեալ բոլոր շրջաններու հայերը Սուրիոյ հին գաղութի մնացորդացը կը հանդիսանային<sup>7</sup>: 46 բնակավայրերէն 22ը ունէին դպրոցական գործ. գործած են 56 դպրոցներ (կարգ մը վայրերու աղջկանց եւ մանչերու անջատ դպրոցները մէկ հաշուելով). 5 դպրոց՝ Պէլլանի շրջանակ՝ ներառեալ Ալեքսանտրէթ եւ Գրըգիսան, 14 դպրոց՝ Սուետիա եւ Անտիոք, 3 դպրոց՝ Լաթաքիոյ շրջանակ, 2 դպրոց՝ Եագուպիէ եւ Գնիէ, 19 դպրոց՝ Քեսապի շրջանակ, 10 դպրոց՝ Հալէպ, 2 դպրոց՝ Դամասկոս, 1 դպրոց՝ Տէր Զօր: Տարագրութենէն վերադարձէն ետք բնիկները կը վերականգնեն իրենց նախկին հոգեւոր-կրթական կեանքը՝ օգտագործելով իրենց եկեղեցական-դպրոցական նախկին շէնքերը:

**2. Երկրորդ փուլ.-** Ֆրանսական զօրքերու Կիլիկիայէն, ինչպէս նաեւ Այնթապէն եւ Ուրֆայէն քաշուելով երկրորդ գաղթականութիւնը հոսեցաւ Սուրիա, ուր տակաւին բազմահազար հայ գաղթականութիւն մը ցրուած իզուր կը սպասէր տունդարձի հնարաւորութիւններուն: Ասոնք այն վերապրողներն էին, որոնք սուրիական անապատներէն դեռ նոր վերադարձեր էին իրենց հայրենի տուն ու տեղին, ու հիմա երկրորդ անգամ կը բռնէին գաղթի ճամփան: Այս փուլին կազմուեցան հետեւեալ շրջանակները.

**ա.- Ազէգ-Աֆրինի շրջանակ,** 1922էն ետք մեծ թիւով հայեր անցնելով Թուրքիա-Սուրիա սահմանագիծը հաստատուեցան Թուրքիոյ սահմանամերձ շրջաններուն մէջ: Այստեղ կարեւոր կեդրոններ եղան

Ազգն ու Աֆրին հայաւանը՝ շրջակայ տասնեակ մը բնակավայրերուն համար, ինչպէս Մէյտան Էքպէզ, Ռաճօ, Քաթմա, Քուրթ Գուլագ, Մազարլըճ, Մապաթլի, Կիւմրիք, Իտլէպ<sup>8</sup>: Այս շրջանակի մէջ հաստատուողները մեծամասնութեամբ քրիստոնէսներ էին: Անոնք օտար չէին այս դրացի շրջաններուն, շատեր նոյնիսկ սեփական արտեր ու ծիթեստաններ ունէին այս կողմերը: Շատեր նոր կայք հաստատեցին իրենց սեփական հողերուն վրայ: Բնիկ հայութիւն մը ունէին Հարէմ եւ Մապաթլի: Քաթման երկաթուղիի կայարանն էր, ուր մեծ թիւով հայեր աշխատանքի անցան:

**բ.- Ալեքսանտրէթի Սանճաթի շրջանակ,** Տէօրթ Եոլէն, Կիլիկիոյ եւ Կապադովկիոյ կողմերէն եկած հոծ հայութիւն մը տեղաւորուեցաւ Ալեքսանտրէթի, Գրըզխանի, Անտիոքի եւ Ռիհանիէի մէջ: Ամրքի դաշտին մէջ եւ Մուսա Լեռան վրայ Ազգերու Լիկայի ջանքերով հիմնուեցան տասնեակ մը հայագիւղեր՝ Սողուք Սու, Չաթալ Թեփէ, Ռիհանիէ եւ մօտիկ Ասկէր Չայիրը կամ Հայաշէնը (կը յիշուի Հայկաշէն ու Նորշէն անուններով), Ապտիւլ Հիյիք կամ Վարդաշէն (կը յիշուի նաեւ Նախիջեւան անունով). Մուսա Լեռան վրայ կը հաստատուի Նոր Ջէյթօն գիւղակը: Հայկադաշտը մուսալեոցիներու կողմէ շինուած նոր գիւղակ մըն է<sup>9</sup>:

**գ.- Ծովափնայ շրջանակ,** Մեծ թիւով կիլիկեցիներ տեղաւորուեցան Լաթաքիա, հայոց հոգեւտան մէջ եւ քաղաքը: Ոմանք անցան Թարթուս, Պանիաս, Սաֆիթա, Քատմուս, Մեշթէլ Հլու<sup>10</sup>:

**դ.- Որոնդէսի հովիտ,** Նոր գաղթավայրեր դարձան Հոմս ու Համա քաղաքները, Սալամիէ եւ Միարտէ ասանները: Հիմնուեցաւ Մուշաշէն հայագիւղը: Փոքրիկ գաղութներ ձեւաւորուեցան նաեւ Ճսըր Շուլուր ասանին եւ Էնկըզիկ գիւղին մէջ<sup>11</sup>:

**ե.- Հալէպի շրջանակ,** Հալէպ շարունակեց մնալ մեծագոյն գաղթակայանը: Վերապրողներն ու կիլիկեան երկրորդ տարագրութենէն եկողները կը նախընտրէին հասնիլ Հալէպ, ուր ատլի պաշտպանուած կը զգային: Միջոց ունեցողները կը տեղաւորուէին Հալէպ քաղաքի հիւսիսային արուարձաններուն մէջ, ուր քրիստոնէայ տարրը ատլի խտութիւն կը ներկայացնէր, ինչպէս՝ Պապուլ Ֆարաճ, Խանտէք, Ճտէյտէ, Նայիալ, Թիլէ, Սալիպէ, որ գերազանցապէս հայկական թաղամաս էր, իսկ ուրիշներ կը տեղաւորուէին հին քաղաքի խաներուն մէջ: Գաղթականներուն մեծ մասը, ան որ վարձ տալու կարողութիւն չունէր, կը հաստատուի հիւղաւաններու մէջ, որոնք գերազանցապէս կ'աճէին քաղաքի հիւսիսակողմը՝ Ռամատանիէի շրջանին մէջ: Հոս ծայրամասային արուարձան էր Ճապրիէն, ուր, իբրեւ վարձակալ, գաղթականները խտութիւն մը կը գոյացնէին, բայց անոր արեւմուտքին ձգուող ու մինչեւ Քուլէք Գետին եզերքը տարածուող հարթութիւններուն մէջ հիւղերը (պարաքա) օրըստօրէ երկու մեծ խմբաւորումներ կը կազմէին՝ Համիտիէն եւ Սուլէյմանիէն: Կային նաեւ Կիւրինցիներու եւ Ասորի քեմիերը, Ջէյթօն

Խանը: Ասորի Քեմիին մէջ աշոտցի հայոց հետ կայք հաստատած էին նաեւ ուրֆացի հայախօս ասորիները<sup>12</sup>:

Համիտիէի եւ Սուլէյմանիէի հիւղաւանները կը կոչուէին Ռամի գաղթակայան: Թղթակիցը 1923ի ձմռան այսպէս կը նկարագրէ գաղթականներու վիճակը. «Մինչեւ գարուն այս ժողովուրդին մէկ չորրորդը անգամ չի մնար. արդէն հիմա օրական 20-30 մահ կը պատահի: Հաց, ծածկոց, դեղորայք, ամէն բան կը պակսի: Օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն փարաբախտ գեղիս խլեակներուն համար»<sup>13</sup>:

Վեր. Ահարոն Շիրաճեան այսպէս կը ներկայացնէ Հալէպի գաղթականութեան տեղաբաշխումը.

Գաղթականներու շուրջ կէսը կ'ապրի քաղաքին մէջ: ...Մնացեալ ատելի չքաւոր կէսը կ'ապրի քաղաքէն դուրս, հիւղաւաններու մէջ, որոնց խոշորագոյնը կը գտնուի հիւսիսը, Սուլէյմանիէ-Համիտի շրջանը, որ կը կոչուի Ռամ քեմի: Ասոր բնակչութեան թիւն է 13 հազար եւ բաժնուած է վեց թաղերու: Առաջին, երկրորդ եւ չորրորդ թաղերը 1900 հիւղերով, գրաւուած են մարաշցի, քիլիսցի, ճիպինցի գաղթականներէ, երրորդ եւ հինգերորդ թաղերը, 1348 հիւղերով, գրաւած են այնթապցիները, վեցերորդ թաղը, 53 հիւղերով, գրաւած են ուրֆացիները: Այս խոշոր քեմիէն մէկ մղոն դէպի հիւսիս կը գտնուի Կէօք Մէյտանի քեմիը, ուր կան Խարբերդի եւ Էրզրումի շրջանէն 900 գաղթականներ, որոնք կ'ապրին հին զօրանոցներու կիսափուլ շէնքերուն մէջ: Ձէյթունի համբաւաւոր ռազմիկներու մնացորդացէն 500 հոգինոց ջախջախուած ու յուսակտուր խումբը կ'ապրի իշխանական անուն կրող Էսատ Փաշա քեմիին կիսաքանդ, լքուած եւ ողորմելի շէնքերուն մէջ: Պաղտատ կայարանին քեմիին մէջ կ'ապրին ուրֆացի սիրիանիներ: Անոնցմէ գատ, կան նաեւ չորս փոքր հիւղաւաններ՝ այնթապցի, խարբերդցի եւ կիւրինցի 1700 գաղթականներով: 1600 գաղթականներ ալ հաստատուած են 11 խաներու մէջ, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ մինչեւ 500 հոգի<sup>14</sup>:

Հիւղաւանները չէին կրնար մնայուն բնակչութիւն մը ունենալ՝ գլխաւորաբար այնտեղ տիրող ծայրայեղ թշուառութեան եւ պայմաններուն հակա-առողջական ըլլալուն պատճառով: Կոյուղիները բաց էին, աղտոտ ջուրերը տեղ-տեղ կ'ամբարուէին հորերու մէջ: Ընպելի ջուրի համար անոնց կից բացուած ջրհորները չէին կրնար մաքուր ըլլալ: Անհատ հողատէրերու կը պատկանէին հիւղաւանին հողերը, որոնց սահմանուած վարձքերն ալ կանոնաւոր չէին տրուեր: Տէրերը կը պահանջէին պարպել հիւղաւանը: Միջոց ունեցողները կը հեռանային հիւղաւանէն՝ տեղաւորուելու համար քաղաքի արուարձաններուն մէջ, ոմանք կը ցրուէին Սուրիոյ տարբեր վայրերը կամ կը գաղթէին այլուր: Ամերիկաներ եւ Եւրոպա գաղթողները շատ էին: Գաղթականներու տեղաւորման յանձնախումբերն ալ

բնակութեան նոր վայրեր ուղղելով գաղթականները՝ կը փորձէին թերթեցնել Հալէպի բերը: Սակայն հիւղաւանը չէր պարպուեր՝ նոր հասած գաղթականներու պատճառով, ինչպէս 1929ին սկսող ու մինչեւ 1932 տետղ գաղթականութիւնը: Նախապէս շինուած հիւղերը չէին քանդուեր՝ գաղթականներու նոր ալիքի մը հնարաւորութեան դիմաց:

1930ին Ռամի քեմիի վեց շրջաններու պատկերը հետեւեալն է.

Ա. շրջան.- 500 հիւղակ (պարաքա), 1200 այր, 1300 կին, գումար՝ 2500: Մխթար՝ Գրիգոր Փարլաքեան:

Բ. շրջան.- 350 հիւղակ, 883 այր, 887 կին, գումար՝ 1770: Մխթար՝ Մկրտիչ Կիլիզեան: Այս երկու շրջաններու բնակչութիւնը մարաշցիներէ կը բաղկանայ մեծաւ մասամբ:

Գ. շրջան.- 708 հիւղակ, 1790 այր, 1750 կին, գումար՝ 3540: Մխթար՝ Գարեգին Թիւթիւնճեան:

Դ. շրջան.- 700 հիւղակ, 1750 այր, 1850 կին, գումար՝ 3600: Մխթար՝ Եագուպ Կէօզիզարայեան:

Ե. շրջան.- 500 հիւղակ, 1200 այր, 1300 կին, գումար՝ 2500: Բոլորը այնթապցիներ: Մխթար՝ Արմենակ Սարգիսեան:

Զ. շրջան.- 215 հիւղակ, 400 այր, 417 կին, գումար՝ 817: Բոլորը ուրֆացիներ: Մխթար՝ Ղազար Գրիգորեան:

Ընդհանուր գումար՝ 2973 հիւղակ, 14,727 բնակիչ<sup>15</sup>:

1932ին գաղթակայանը աւելի մեծցած կ'երեւի, նախկին վեցի փոխարէն եօթը շրջանակներ ունենալով: Կը յիշուի, որ Ա. եւ Բ. շրջանակներու պետն է՝ Կիլիզեանը: Ա. շրջանակը կը բաղկանայ 400 տուններէ եւ 32 խանութներէ: Կը պարունակէ 2241 անձ 490 ընտանիքներու վրայ, բաժնուած յարանուանական հետեւեալ պատկերով.- հայ առաքելական՝ 352, հայ կաթողիկ՝ 74, հայ աւետարանական՝ 47, հայ լատին՝ 14, մորմոն՝ 1, սուրիական կաթողիկ՝ 1 եւ քաղղէացի՝ 1 ընտանիք: Ըստ հայրենակցական բաժանումի.- մարաշցի՝ 256, այնթապցի՝ 83, քիլիսցի՝ 43, խարբերոցի՝ 39, ռումգալէցի՝ 8, տիգրանակերտցի՝ 8, բալուցի՝ 7, ուրֆացի՝ 6, կիւրիւնցի՝ 3, զէյթունցի՝ 3, սղերոցի՝ 3, մալաթիացի՝ 2 ընտանիք եւն.: Միւս շրջանակներն ալ ունին գրեթէ համանման պատկերներ<sup>16</sup>:

Հիւղաւանը լաւագոյն պատուպարանն էր անոնց, որոնք իսկապէս ծայրայեղ թշուառութեան մէջ կ'ապրէին, որքան ալ հոն ֆիզիքական պայմանները վատառողջ էին ու որքան ալ սպառնալից էին հողատէրերուն կողմէ հողերը պարպելու դատական հետապնդումները: 1932-1935ականներուն քանդումի գործողութիւնները կը ձգձգուէին իբրեւ արդիւնք գաղթականներու կողմէ բացուած դատերուն: 1935ին կը տրուի միայն մէկ տարուան պայմանաժամ՝ նոր հող գնելու եւ հիւղերը լքելու համար:

Գաղթականաց Յանձնախումբի ջանքերով շուտով հողեր կը տրամադրուին գաղթականներուն, ու մէկը միւսին ետեւէն կը կառուցուին

Նոր Գիւղ (Մէլտան), Պոսթան Փաշա, Հէօլլիք, Աճուրլուք, Շէյխ Մաքսուտ ու Ճեպէլ Սէյտէ (Խորթալախ), Էշրեֆիէ (Տաուտիէ) զուտ հայաբնակ հսկայ թաղամասերը: 1935-1936ին Ռամի գաղթակայանը կը քանդուի ու անոր տեղ կառուցուած Սուլէյմանիէի նորագոյն թաղամասին բնակիչները կ'ըլլան հայերն ու քրիստոնէայ այլ փոքրամասնութիւնները: Քուէյք Գետի ձախ ափին 1960ականներուն կը սկսի կառուցուիլ Վիլլաներ թաղամասը՝ գերազանցապէս հայ բնակիչներով:

**գ.- Դամասկոսի շրջանակ,** 1915ին դէպի Համա, ապա Հոմս քշուող հայ տարագիրներու յաջորդ մեծ գաղթակայանը կը հանդիսանայ Դամասկոսը: 1915 Օգոստոսէն Դեկտեմբեր հոս հասած են շուրջ 130,000 հայեր: Գաղթականներու գլխաւոր կեդրոնը եղած է Քատմը<sup>17</sup>: Ասկէ խումբ-խումբ քշուած են շուրջ 30,000 աքսորականներ: 1916 Փետրուարին Դամասկոսի եւ շրջաններուն մէջ կը գտնուին աւելի քան 100,000 հայեր<sup>18</sup>:

1917 Նոյեմբերին հոս կը տարագրուին նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան սինոտի անդամներն ու հոն գտնուող այլ երեւելի հոգեւորականներ, ինչպէս Սոյ Սահակ Կթղ. Խապայեանը, Գարեգին Եպս. Խաչատուրեանը, Մաղաքիա Եպս. Օրմանեանը, Կարապետ Արք. Մազլըմեանը, որ կը նշանակուի տեսուչ տեղւոյն նորաբաց որբանոցներուն, Եղիշէ Եպս. Չիլինկիրեանը, որ 1917-1918 կը վարէ Դամասկոսի Առաջնորդութիւնը:

Զինադադարէն անմիջապէս ետք վերապրող գաղթականներու հաւաքագրում կը կատարուի երկրի հարաւային շրջաններու մէջ: Եգիպտահայերու ղեկավարութեամբ ազատագրութեան եւ փրկութեան հայկական խումբերը կազմուեցան 1918ի գարնան: Առաջին խումբին՝ Հայկական Արշաւական Փրկութեան Խումբին ղեկավարն էր Դամասկոսի մէջ օսմանեան չորրորդ բանակի զինուոր մը՝ Լեւոն Եօթնեղբայրեանը: Ան կը վայելէր հոշակաւոր արաբ ղեկավար Ֆայսալ իշխանի (որ պայքարեցաւ Սուրիան թուրքերէն ազատագրելու ի խնդիր) եւ բրիտանական բանակի սպայակոյտի աջակցութիւնը: Հաուրանի շրջանին մէջ, Զինադադարի հաստատումէն ետք, խումբը յաջողեցաւ փրկուած հայերը Տրաս եւ Դամասկոս փոխադրելու աշխատանքը շարունակել, ուրկէ խումբ-խումբ կը կատարուի անոնց վերադարձը դէպի ազատագրեալ շրջաններ: Ասոնք մեծ մասամբ Անտիոքի եւ Կիլիկիոյ շրջաններու բնիկներ են ու հետեւաբար կը վերադառնան այն յոյսով, որ պիտի վերագտնեն իրենց տունն ու տեղը: Յաջորդող երկու տարուան մէջ գաղթակայանները գրեթէ կը պարպուին ու Դամասկոսի մէջ կը մնան միայն 4000 հայեր, որոնց գէթ մէկ չորրորդը հին գաղութի բնիկներն են:

1922ին վրայ կը հասնի կիլիկեան երկրորդ գաղթականութիւնը: Ֆրանսացիները Թուրքիոյ կը յանձնեն Կիլիկիան եւ հիւսիսային Սուրիոյ հայաշատ շրջանները, ուր վերապրողները վերահաստատուած էին: Ֆրանսական զօրքերուն հետ շրջանէն կը հեռանան նաեւ հայերը ու նոր

կայք կը փնտռեն Սուրիոյ մէջ: 1923ին Դամասկոս կայ 8000, իսկ մէկ ամիս ետք՝ 11,000 հայութիւն<sup>19</sup>:

Հայոց նախկին Պապ Շարքի եւ Պապ Թումա թաղամասերէն դուրս հոծ բազմութիւն մը հաստատուեցաւ նաեւ քաղաքի տարբեր թաղամասերուն մէջ, յատկապէս՝ Քատէմ, Սալիիէ: Լրիւ հայաբնակ էին Պոսթան Սալիպի եւ Սուֆանիէ հիւղաւանները: Հայեր կ'ապրէին նաեւ Դամասկոսի մերձակայ Մեզզէ, Տումա ու Քաթանա օւաններուն մէջ: Դամասկոսէն հարաւ, դէպի Յորդանան տանող տարագրութեան ճամփաներուն վրայ գտնուող հայերը մէկտեղուեցան Քունէյթրա, Տրաա, Սուէյտա եւ Սալիսաթ օւաններուն մէջ<sup>20</sup>:

**է.- Սուրիական Եփրատի վերին հովիտ**, 1922ին Հիւսիսային Սուրիոյ ֆրանսական բարձր քոմիսէրի ներկայացուցիչ զօրավար Billette կը յաջողի հայ գաղթականներ տեղաւորել Եփրատի հովիտի սահմանամերձ շրջաններուն մէջ: Արեւմտեան ափին, հայեր հաստատուեցան Պապ, Մումպուր եւ Ճարապլուս օւաններուն մէջ: Արեւելեան կողմը հիմնուեցան սահմանամերձ Արաբ Փունար եւ Թէլ Ապիատ գիւղերը: Անոնք մեծ մասով Ուրֆայի, Պերեճիկի, Արուհի շրջաններու հայերն էին, որոնք դեռ տարագրութենէն առաջ որոշ կալուածներ ալ ունէին հոն եւ բարեկամական յարաբերութիւններ մշակած էին շրջանի պետեւի աշիրէթներուն հետ: 1908ին ուրֆացիք ձեռնամուխ եղած էին բնակութիւն հաստատելու այս կողմերը, Այն Արուսի շուրջ<sup>21</sup>, հայոց պատկանող ընդարձակ հողերուն վրայ: Այդ նպատակով ալ միութիւն մը կազմուած էր Ուրֆայի մէջ: Կը հիմնուին Շարակրատ, Հիշէ Պենտի եւ Սյուկ գիւղերը. երեքն ալ ներկայիս Սուրիոյ մէջ: 170 հայ ընտանիք կը տեղափոխուի հոն. նորաբնակները մէկ տարի վարուցանք ալ կ'ընեն, բայց չեն գոյատեւեր: Ատկէ ետք հայերը իրենց հողերը վարձքով կու տային տեղացի արաբներուն:

Քարէն Եփիէ՛ Ազգերու Լիկայի լիազօր ներկայացուցիչի հանգամանքով, երկրագործութեամբ զբաղիլ ուզող հայոց համար յարմարագոյն տեղ կը համարէր այդ շրջանը, մանաւանդ Եփրատի հարկատու Պալըխ Գետի օւազանին մէջ, մինչեւ Բաքքա: Անոր ջանքերով 30 կարմուջցի ընտանիքներ կը հաստատուին Այն Արուս, Քարէն Եփիէի որդեգիր Միսաք Մելքոնեանի ղեկավարութեամբ: Վերջինս 1924էն սկսեալ հոս կազմակերպեց ու իրականացուց Ազատարար Միսիոնը, որուն միջոցով հարիւրաւոր հայեր օտարացումէ փրկուեցան ու դարձան հայութեան: Ան լաւագոյնս սիրաշահելով Անեզէ արաբ ցեղախումբի մեծամեծները, տեղական եւ ֆրանսական իշխանութիւններու ներկայացուցիչները, գիւղէ գիւղ, վրանախումբէ վրանախումբ խուզարկեց ու գտաւ օտարներուն յանձնուած հայու բեկորներ: Ասոնք Ազատարար Միսիոնի միջոցաւ իրենց ազգին կը վերադարձուէին: Անապատին մէջ Մելքոնեանի գործակիցներն էին Խաչիկ Յակոբեանն ու Ռուբէն Հերեանը: Ազատագիրները կը բերուէին Թէլ Սիմէն, ոմանք կ'ուղարկուէին Հալէպ՝ Քարէն Եփիէի, իսկ միւսերը կը տեղաւորուէին ոչ-շատ հեռու Խըրպըթ Էլ

Ռեզ, ուր կը ձեւատրուի Թէլ Արմէն գիւղակը. 1926ին քիչ անդին կը ձեւատրուի նաեւ Շարպ Պետրոս գիւղակը: Խըրպըթ էլ Ռեզի մէջ կը բացուի որբանոց, որ կը դրուի Օր. Ենի Ենսընի խնամքին ու հոգատարութեան տակ: Որբանոցը շրջան մը կը պատսպարէ 60-70 որբեր: Քարէն Եփփէ իր անմիջական հսկողութեան տակ կ'առնէ իր հիմնած ոչ միայն Այն Արուս, Թէլ Արմէն, Շարպ Պետրոս եւ Այն Թինա գիւղերը, այլեւ շրջանի ամբողջ հայութիւնը՝ Թէլ Ապիատ, Ճարապլուս, Արաբ Փունար, Ռասուլ Այն, Րաքքա, Պապ, Մումպուճ, Համամ<sup>22</sup>:

**ը.- Սուրիական Միջագետքի արեւելեան շրջանակ,** Սուրիական Միջագետքի ծայր արեւելեան շրջանը կ'ընդգրկէ Եփրատի հարկատու Խապուր եւ ասոր հարկատու Ճաղճաղ վտակի աւազանները մինչեւ Տիգրիս Գետ ու Իրաքի սահմանը: Խապուր Գետի աւազանին մէջ 1915ին հայ տարագիրները ապրեցան Մեծ Եղեռնի ամէնէն վայրագ հաւաքական կոտորածները Ռասուլ Այնէն, մինչեւ Շատտատէ, Մարկատէ ու Տէր Զօր:

Շրջանի հայութեան առաջին շերտը կը կազմեն վերապրողները, որոնք չեն հասցներ Զինադադարէն անմիջապէս ետք շրջանէն հեռանալու ելք գտնել: 1922ին, ֆրանսական զօրքերու շրջան մուտք գործելէ ետք, ւելի ապահով գտնելով կը մնան ու կը մէկտեղուին գլխաւորաբար Տէր Զօր, Ռասուլ Այն, Ապու Քեմալ, Հասիչէ եւ Քամիշլի, ինչպէս նաեւ Քարամանիէ, Տերիք, Տրպեսիէ եւ Այն Տիար:

1922էն սկսեալ շրջան կը սկսին հոսիլ մերտինցի փախստականներ՝ հայ, ասորի ու քաղղէացի<sup>23</sup>: Մերտինը սուրիական նոր սահմանէն ոչ-հեռու քաղաք մըն է, ուր կ'ապրէին հայեր, ասորիներ ու քաղղէացիներ: Հայերը ամբողջապէս արաբախօս էին եւ կաթոլիկ: Ունէին առանձին եպիսկոպոսութիւն: 1915ի Յուլիսի Յին օսմանեան ոստիկանութիւնը կը ձերբակալէ հայոց Առաջնորդը՝ Իգնատիոս Մալոյեան եպիսկոպոսը, կրօնական դասի բոլոր անդամները եւ համայնքի երեւելիները, նոյն ատեն նաեւ՝ ասորի եւ քաղղէական եկեղեցական դասն ու երեւելիները, ապա Տիարպեքի տանելու պատրուակով շրթայակապ կը հանէ քաղաքէն դուրս ու կը սպանէ անասելի չարչարանքներով: Սպանողը կը կատարուի Յունիս 10-11ին: Մերտինի բնակիչներէն շատեր սարսափած կը փախչին Սինճարի Լեռներ կամ արաբ ցեղախումբերու մօտ: Երբ պատերազմը կ'աւարտի՝ շրջան կը մտնեն ֆրանսական զօրքերը, իսկ տանիմարքացի զօրավար Էրնէթ շրջան կու գայ թրքական պետութեան հետ սահմանները վերջնական ձեւով որոշելու: Մերտին կը մնայ Թուրքիոյ կողմը: Մերտինցի քրիստոնեաները մեծ թիւով, իսկ հայերը ամբողջութեամբ կը սկսին զաղթել Սուրիա, Լիբանան ու Իրաք: Սուրիա մտնողները մեծամասնութեամբ կը հաստատուին Խապուր Գետի աւազանին մէջ:

Տէր Զօր շատ կարեւոր դեր կ'ունենայ անապատի ցեղախումբերու մէջ ցրուած հայ որբերու, որբուհիներու եւ կանանց փրկութեան գործին մէջ: Այստեղ 1919ի սկիզբներուն կը հասնի Հերեանը: Ան Մուշեղ Արք.

Սերրբեանի եւ Թորգոմ եպիսկոպոսի ցուցմունքներով եւ լիազօրութեամբ ստանձնեց հայ վերապրողները յայտնաբերելու եւ ապահով կերպով Տէր Զօրէն Հալէպ փոխադրելու գործը: Հերեան կը գործակցէր անգլիական եւ ֆրանսական իշխանութիւններուն հետ, ՀԲԸՄի, Հայ Ազգային Միութեան, Պոլսոյ Պատրիարքութեան, Ազգերու Լիկայի ներկայացուցիչներուն, Մերձաւոր Արեւելքի Նպաստից գործիչներուն եւ ուրիշներու հետ: Ան հիմնականին մէջ կը գործէր Ճեզիրէի, Շամաթիէի, Խերէյթայի, Թերպանի, Հաուիժայի, Մէյատինի, Ապու Քեմալի, Ժիպուրի եւ Շաուիի մէջ, որոնք կը գտնուէին Տէր Զօրի շրջակայքը: Իսլամացած հայերու իսլամական հաստատութիւններէն փրկելու գործընթացը կոչուած էր «Փրկութեան առաքելութիւն» կամ «Ազատագրութեան առաքելութիւն»: Այս գործունէութեան կարեւոր ցուցմունքներէն մէկը հետեւեալն էր. «*Բոլոր հայերը, որոնց անունները փոխուած են եւ բռնի կերպով իսլամացուած, պէտք է ազատագրուին եւ վերադարձուին, եւ եթէ իսլամներու կողմէ տռուանգուած են՝ ամէն ինչ պէտք է կատարուի զանոնք փրկելու համար*»: 1919-1921՝ Հերեան քանիցս եկաւ Տէր Զօր ու կազմակերպեց հազարաւորներու փրկութիւնը: Անոր մահէն ետք այդ գործը շարունակեցին իր ազատագիրները եւ ուրիշներ:

Այդ մասին հետեւեալը կը վկայուի. «*Տէր Զօրի նախճիրներէն ազատուած փոքրիկ հայ մանուկներ, որոնք փրկուած են շրջակայ պետեւիներու կողմէ, չափահասութեան տարիքին ալ, դեռ կ'ապրին շրջիկ պետեւիներու կեանքը: Այսպիսի հազարաւոր աղջիկներ ու երիտասարդներ կը գտնուին անապատին մէջ: Անոնցմէ ոմանք մերթ ընդ մերթ կը փախչին Տէր Զօր, ուր՝ իր ազգասիրութեամբ ու առաքածեռնութեամբ հոշակ հանած Տիկին Սաթենիկ (այրին հանգուցեալ դերձակ Գրիգոր Հայկեանի) զանոնք խնամելով եւ իրենց անմիջական պէտքերը հոգալով կը դրկէ Հալէպ՝ Միս Քարէն Եփիէի պատասպարանը»<sup>24</sup>:*

Հոս ամէնէն առաջ կը կազմակերպուի Տէր Զօրի գաղութը. 1923ին կ'ունենայ թաղական խորհուրդ, եկեղեցի, դպրոց ու քահանայ: Տէր Զօր մինչեւ հնգամեակ մը կը մնայ շրջանի կեդրոնը, ու տեղւոյն քահանան այցելութիւններով կը հովուէ շրջանի միւս հայերը: Նոյն թուին կը վերակազմուի նաեւ Տէր Զօրի հայ կաթողիկէ համայնքը, որ շրջանին մէջ գոյութիւն ունեցող միակ հայ համայնքն էր Մեծ Եղեռնէն առաջ:

**3. Երրորդ փուլ.**– Շրջանի հայութեան երրորդ շերտը արեւելեան նահանգներէն Սուրիա անցնող հայ գաղթականութիւնը կ'ըլլայ: 1927-1931 տարիներուն շրջան կը հոսին մեծամասնութեամբ քրտախօս պշերիկցի հայերը: Քրտախօս հայերը Քամիշլի կու գային Թուրքիոյ Ճեզիրէթ Պոթանէն կամ Պշերի Լեռներէն, ատոր համար ալ կը կոչուէին պշերիկցիներ:

1925ին պայթեցաւ քրտական ապստամբութիւնը: Յատկապէս Տիգրանակերտի ու Բաղէշի նահանգներուն մէջ հայոց մնացորդացը

կ'ապրէր քիւրտ մեծաւորներու հովանաւորութեան տակ՝ բոլորովին զրկուած իր ժառանգութենէն ու իրաւունքներէն: Անոր համար չէր կրնար բողոքել թուրք իշխանութիւններուն, ոչ ալ կրնար գլուխ ցցել քրտական տեղական իշխանութիւններուն դէմ: Շատեր թէեւ իսլամացած՝ կացութենէն դուրս գալու միջոցներ կը փնտռէին: Առիթը դարձաւ այս խառնակ վիճակը: Եւ ահա 1927էն սկսեալ տեղ-տեղ զանգուածային, բայց մեծ մասով առանձին ընտանիքներով դէպի Միջագետք, յատկապէս Քամիշլիի շրջանը փախան Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգներուն մէջ մնացած հայերը, որոնց շարքին մեծ թիւ կը կազմէին պշերիկցիները: Ասիկա սովորական փախուստ մը չէր, փախստականները մինչեւ սուրիական սահման հասնիլը կ'անցնէին ողիսականներէ, իրենց քիւրտ տէրերը իրենց զինեալ մարդոց հետ կը կտրէին ճամփաները, կը տանջէին փախստականները, կը կողոպտէին ու բախտաւոր պարագային՝ թոյլ կու տային անցնիլ սահմանը ամբողջապէս կողոպտուած ու ձեռնունայն: Ասիկա հոգիի փրկութիւն մըն էր:

Իբրեւ վկայութիւն այստեղ աւելորդ չ'ըլլար մէջբերել Սղերդի Էնքասիր Գիւլէն քառասուն փախստականներու ողիսականէն հատուած մը՝ խումբի առաջնորդ Կիրակոս Գրիգորեանի վկայութեամբ: Խումբը Սուրիա կը մտնէ 3 Ապրիլ 1930ին:

Այս մարդը մէկն է քիւրտ Ահմէտ Իսքա Աղայի գործաւորներէն, որոնք անոր քով աշխատած են երկար տարիներ: Աղան անոնց տրամադրած է սերմնացու, եզներ ու կովեր: Անոնք աշխատած են ու բերքին երեք քառորդը հարկադրաբար տրամադրած են աղային, իսկ մէկ չորրորդը մնացած է իրենց: Անոնք արտօնութիւն ունեցած են կովերուն եւ ոչխարներուն կաթը առնել, բայց երբեք չեն կրցած զանոնք սեփականացնել: Վերջերս քիւրտ աղան շատ գէշ կերպով վարուած է անոնց հետ. քիւրտերը մտած են իրենց տունները ու բռնութեամբ առած են ամէն բան, նոյնիսկ անոնց աղջիկներն ու կիները: Անոնք իբրեւ հայեր, չեն կրցած ներկայանալ թուրք կառավարութեան, որովհետեւ անոնց ծայնը լսելի պիտի չըլլար, եւ քիւրտերը անկէ ետք զիրենք պիտի նեղէին աւելի քան երբեք: Անոնք ստիպուած էին լքելու իրենց տունները՝ նոյնիսկ մահուան սպառնալիքի տակ:

Անոնք մեկնեցան 3 Մարտ 1930ին, ընդամէնը 40 հոգիով: Ութ ժամ տեսող ճամփորդութենէ մը ետք խումբը կը հասնի ասորի վանք մը: Անկէ ասորիներու ընկերակցութեամբ անոնք կու գան կը հասնին Տիգրիսի ափին: Այստեղ անոնց դէմ կ'ելլէ քիւրտ Ապտուլլան իր զինեալ մարդոց հետ: Այս մարդը որդին է քիւրտ կնոջ մը, Փերի Խանէ, այրին քիւրտ Ահմէտ աղային, սարսափելի բռնակալ մը ու հայդուկ մը: Այս կինը ունի երեք զաւակներ, զորս ինք կ'օգտագործէ սպանելու եւ կողոպտելու հայերը: Ան պատմականօրէն հոչակաւոր է իր ահաբեկումներով եւ սպանութիւններով:

Քիւրտ Ապտուլլան այս հայերը տասը ժամ կը բանտարկէ քարայրի մը մէջ, կը ծեծէ զանոնք ու դրամ կը պահանջէ: Վերջապէս անոնցմէ կը զանձէ 25 թրքական ոսկեդրամ ու ազատ կ'արձակէ: Անոնք կը ճամփորդեն վեց ժամ եւս, երբ ուրիշ քիւրտ աղա մը, Ճեմիլ Մուհամմետ, կը շրջապատէ զանոնք իր զինեալներով, կը ծեծէ, կը սպառնայ սպանել զանոնք եւ դրամ կը պահանջէ: Ան հայերը կը բանտարկէ խոր քարայրի մը մէջ, ուր կը մնան ութ ժամ: Եւ անոնք ասկէ ալ կ'ազատին 25 թրքական ոսկեդրամ տալով բռնակալին<sup>25</sup>:

Պշտիկցի փախստականներու հոսքը ուղղուեցաւ Քամիշլի: Անոնք՝ հետիոտն եւ չեթներէն կողոպտուած, անցնելով Տարոսեան Լեռներէն, եկան կայք հաստատելու Քամիշլի եւ շրջակայքի ճահճոտ բնակավայրերը, Ճաղճաղ Գետի ափերուն, պատմական Մծբին Քաղաքի ւտերակներուն մօտիկ:

Հայ Գաղթականաց Ինճամատարութեան Կեդրոնական Յանձնախումբը (ՀԳԽԿՅ) 1927ին փոքրիկ խումբերով Սուրիա մտնող այս գաղթականները սկզբնապէս կը տեղաւորէր Հալէպի մէջ, յատկապէս անոնց համար նկատի ունէր Նոր Գիւղը, բայց պշտիկցիները միասին ապրիլ ուզելով կը նախընտրէին մնալ Քամիշլիի եւ Հասիչէի կողմերը, այն երազանքով, թէ գուցէ օր մը դարձեալ երկիր կրնան վերադառնալ: ԳԽԿՅը 8 Փետրուար 1930ի իր նիստին՝ լուծելու համար Հասիչէի եւ Քամիշլիի շրջանները թափանցած նոր ու հին գաղթականներու, մանաւանդ այդ տարին ներս թափանցած շուրջ 5000 պշտիկցիներու եւ հնարաւոր նորերու կեցութեան ու տեղաւորման հարցերը, կը յառաջացնէ Գաղթականաց Տեղաւորման Յանձնախումբը (ԳՏՅ)՝ հետեւեալ անձերէն բաղկացած.- Վեր. Շիրաճեան, Տոքթ. Թորոս Պասմաճեան, Միսաք Մելքոնեան, Տիգրան Ռշտունի, Ճեմիլ Տիլէնճի, Միշէլ Թերճանեան, Եագուպ Մանկալօ<sup>26</sup>:

ԳՏՅն ամէն լիազօրութիւն ունէր Քամիշլիի եւ Հասիչէի շրջաններուն մէջ «մահմուլ» հողերու գնման, տուներու շինութեան, գաղթականներու ցանկագրման, տեղաբաշխումին եւ նպաստի բաժանումին մէջ:

ԳՏՅի պետը՝ Վեր. Շիրաճեան, քանիցս կը ճամփորդէ այդ կողմերը ու պէտք եղած միջոցառումները կը կատարէ: 31 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրը առաջինն է, որ մանրամասն տեղեկութիւններ կու տայ այս կողմերը հաստատուած գաղթականութեան մասին<sup>27</sup>: Այդ տեղեկագիրին մէջ արդէն կը խօսուի Քամիշլի, Հասիչէ եւ անոնց միջեւ՝ Քարամանիէ եւ Ամուտա հաստատուած հայոց մասին:

Վեր. Շիրաճեան մասնաւորելով իր խօսքը նորեկ գաղթական պշտիկցիներու մասին՝ հետեւեալը կը տեղեկագրէ. «*Չորս-հինգ ամիսներ առաջ Թուրքիոյ սահմանակից Տիարպեքիի եւ Սղերդի շրջաններէն այս կողմերը գաղթեցին 450 ընտանիքներ, իսկ երկու ամիս ետք 30*

ընդհանրություններ եւ՝ Սուրիա հաստատուելու մտադրութեամբ: Անոնցմէ ոմանք հայերէն գիտեն, սակայն մեծամասնութիւնը քրտախօս է: Քրտախօս հայերէն ոմանք կարողացած են իրենց հետ բերել իրենց հօտերը եւ որոշ կահ-կարասի, բայց մեծամասնութիւնը, 400 ընդհանր, ճամփան կողոպտուած են ու սնանկացած, զրկուած ամէն կարողութենէ»<sup>28</sup>:

ՀԳԽԿՅն կազմակերպեց օգնութիւն եւ նպաստ: Ֆրանսական եւ տեղական իշխանութիւններն ալ սննդամթերք տրամադրեցին: Սակայն գաղթականները վրանաբնակ իրենց կացութենէն դուրս ելլել ուզելով կը ջանային կայք գտնել ու մշտապէս տեղաւորուիլ: Շատեր կայք հաստատեցին Ամուտա, Ռասուլ Այն, Տրպեսիէ, Հասիչէ եւ Տէր Զօր: Պշտիկցիներէն շատեր մասնակցեցան Տէր Զօրի կամուրջին շինութեան աշխատանքներուն:

Գաղթականներէն ոմանք բնակարանային եւ ապրուստի դժուարութիւնները լուծելու համար տեղաշարժի դիմեցին եւ տեղափոխուեցան Տերիք ու շրջակայքի Այն Տիար, Ուանըքէ, Պազընտանէ, Հաքամիէ եւ այլ գիւղեր՝ Տիգրիսի մօտակայ ավերուն: Այս շրջանը Քամիշլիէն դէպի արեւելք՝ շուրջ 100 քլմ. հեռաւորութեան վրայ կը գտնուէր: Շիրաճեան կը տեղեկագրէ. «Հասիչէն դէպի Քամիշլի, դէպի արեւելք՝ գաղթականներ ընդունող բազմաթիւ բնակավայրեր կան: Իրաք-թրքական սահմանին վրայ կայ ընդարձակ փարածութիւն մը, հոն կան հարիւրաւոր հողէ բլուրներ, որոնք հին ժամանակներուն քաղաքներու եւ գիւղերու կեդրոններ էին, ինչպէս Թէլ Արուսը, Թէլ Ուզումը, Թէլ Ինճիրը, Թէլ Պէյքարը, Թէլ Մաճուր են., են.: Այս վայրերու ներկայ բնակչութիւնը քրիստոնեաներու կողքին բաղկացած է քուրդ մեծամասնութենէ մը. քրտական գիւղեր կ'երեւին ամէն կողմ: Պեպոլին արաբները նոյնպէս կ'ուզեն հաստատուիլ շրջանին մէջ նորանոր գիւղեր շինելով»<sup>29</sup>:

Ամբողջ շրջանը, մանաւանդ Քամիշլին, բազմազգ բնակավայր մը կը դառնար, ուր «եկած են կայք դնելու փարբեր ազգերու եւ ցեղերու զաւակներ՝ հայ, հրեայ, արաբ, քուրդ, եագուպիկ ասորի, մերտինցի թոխլորքին...: Քրտացած հայեր ալ կային, Մամկունի խաշնարած ցեղը, մամիկոնեաններէն, Ռըշկոթա ցեղը՝ ոշպունիներէն, Հօմերիները՝ էրմենիներէն՝ հայերէն սերած, Պակկարա ցեղը՝ արաբ, բագրատունիներէն»<sup>30</sup>: Հայերը ինքնին բազմազանութիւն մը կը ներկայացնէին՝ հայախօսները, քրտախօսները, արաբախօսները:

ԳԽԿՅն, որ կը գործէր հայ երեք համայնքներու միացեալ հովանաւորութեան տակ, արտասահմանի հայ մամուլին միջոցաւ ահազանգ հնչեցուց՝ հայ գաղթականներուն օգնութեան ձեռք երկարելու յուզալի կոչերով, ներկայացնելով անոնց սրտաճմլիկ կացութիւնն ու կարիքները: Կոչերը անարձագանգ չմնացին: Հայկական հեռաւոր գաղութներէն գաղթականներուն դեղօրայք, հագուստեղէն եւ նիւթական օժանդակութիւն հասան: Օգնութեան փութացին նաեւ օտար միսիոնարներ

ու երոպական բարեսիրական շրջանակներ: Այսպես՝ ԳԽԿՅն գործի մղելով նաեւ իր մասնաճիւղերը 19 Դեկտեմբեր 1929ի որոշումով շրջան կը դրկէ բժիշկ ու մեծ քանակութեամբ դեղորայք ու անմիջական խնամքի տակ կ'առնէ զանազան հիւանդութիւններէ տառապող 120 մանուկներ: Մալարիան ամէնէն սպառնալից հիւանդութիւնը կը հանդիսանար այս ճահճոտ միջավայրին մէջ: Նոյն օրերուն 47 հակ հագուստեղէն կը տրուի գաղթականներուն: Ամէնէն մտահոգիչը բնակարանային խնդիրն էր: Գաղթականները յաճախ երկու կամ երեք ընտանիքներով կը բնակէին իրենց կողմէ շինուած մէկ սենեակնոց հիւղերուն մէջ:

Վեր. Շիրաճեան 3 Մարտ 1930 թուակիր տեղեկագիրով կը խօսի ԳՏՅի անմիջական ընելիքներուն մասին, յայտնելով որ հայ անհատներու եւ հաստատութիւններու կողմէ տրամադրուած 1800 եւ օտար բարերարներէ եկած 1200 թրքական ոսկեդրամի հաշուէն 200 կամ 220 ընտանիքի ծրագրած է տրամադրել վրաններ, որպէսզի անոնք հաստատուին ու զբաղին երկրագործութեամբ ու անասնապահութեամբ: Իւրաքանչիւր ընտանիքի պիտի տրուին նաեւ մէկական եգ, ոչխար եւ այծ, երկրագործական անհրաժեշտ գործիքներ, երկու կամ երեք ամսուան համար բաւարար սննդամթերք: Յանձնախումբի առաջնահերթ գործն է այդ գարնան իսկ գտնել, գնել ու անոնց տրամադրել անհրաժեշտ հողատարածութիւնները: Ասոնցմէ զատ 50 ընտանիքներ նոյնպէս կրնան ինքնաբաւ ըլլալ, եթէ անոնց եւս տրամադրուի անհրաժեշտ մշակելի հողատարածք: «Ասոնցմէ դուրս մեր պիւլտճէի կարողութենէն դուրս կը մնայ օգտակար ըլլալ եւս 210 ընտանիքներու, որոնք Սուրիա անցած են: Արոր համար 600 թրքական ոսկեդրամի կարիք պիտի զգացուէր: Եւ եթէ վրաններու փոխարէն հիւղեր պիտի հաստատուին, ինչ որ անխուսափելի է յառաջիկայ ձմրան պարագային, ապա 10-12 հազար թրքական ոսկեդրամէն ոչ պակաս գումարի մը կարիքը կը զգացուի: Բայց, այս ամբողջ խնդրին ամէնէն տխուր բաժինը այն է, որ նորեկներուն թիւը շարունակաբար կը բարձրանայ: Որոշ վստահելի աղբիւրներէն ելլելով կայ ընդհանուր վախ մը, որ մենք որեւէ արեւն կրնանք գտնուիլ Թուրքիայէն եկող 600-700 ընտանիքներու նոր գաղթի մը առջեւ»<sup>31</sup>:

ԳՏՅի մեծագոյն իրագործումը կ'ըլլան Թէլ Պրաքի մէջ շինուած երկու գիւղեր՝ Սահակաշէնն ու Մեսրոպաշէնը<sup>32</sup>: ԳՏՅն նոյն հոգածութիւնը ցուցաբերած է նաեւ քամիշլիաբնակ գաղթականներուն նկատմամբ: Շիրաճեան միշտ շրջան կը գտնուի, գործի վրայ է:

Քամիշլիի, Տերիքի եւ Հասիչէի շրջաններուն մէջ պշերիկցիներու տեղաշարժերը տեսած են շուրջ հինգ տարի, մինչեւ որ անոնք մեծ մասով եկած հաստատուած են Քամիշլի եւ անոր մօտիկ տասնեակ մը գիւղերուն մէջ, որոնցմէ շատերը անոնց ձեռակերտներն են: Անոնք հողի մարդիկ էին, հողի կարօտով ապրող մարդիկ: Քաղաքին կեանքը նեղ եւ ճնշիչ կը թուէր անոնց:

Քամիշլիի շրջակայքը կը տարածուէին ընդարձակ դաշտագետիններ, արօր չտեսած պարարտ հողեր, որոնք սեփականութիւնն էին շրջանի արաբ շէյխերուն: 1930ականներէն սկսեալ, պշերիկցիները նախաձեռնեցին հայկական գիւղերու կառուցման աշխատանքին: Կարճ ժամանակի մը մէջ Քամիշլիի շրջակայքը կառուցուեցան շուրջ 25 զուտ հայկական գիւղեր՝ աղիաաշէն բնակարաններով: Իրաքանչիւր գիւղ ունեցաւ իր գիւղապետը (մուխթար):

Գիւղակերտումի այս իրագործումը նոր եռանդով համակեց պշերիկցիները, որոնք նախաձեռնեցին ցորենի եւ այլ արմտիքներու մշակման: Անոնք մշակեցին նաեւ բանջարանոցներ, խնամեցին ոչխարի հօտեր եւ արջառներ, իսկ կիները զբաղեցան հաւաքուծութեամբ, ինչպէս նաեւ ձմռան վառելիքի ապահովման եւ ուտեստեղէնի ամբարման աշխատանքով: Ժրաջան էին պշերիկցի կիները: Անոնք իրենց տնային աշխատանքին զուգընթաց՝ կ'օգնէին նաեւ իրենց ամուսիններուն դաշտային աշխատանքի:

Յիշեալ գիւղերէն իւրաքանչիւրը ուներ մէկէ աւելի թոնիրներ եւ ըմպելի ջուրի մատակարարման ջրհորներ: Գիւղերուն արտերը մեծաւ մասամբ կ'ոռոգուէին ճաղճաղ Գետի ջուրերով:

Այս նոր գիւղերու կալուածատէր արաբ շէյխերը հիացած էին իտես պշերիկցի գիւղացիներու ժրաջանութեան, կորովին եւ արդիւնաբեր աշխատանքին: Նոյն շէյխերը իրենց կարգին կը վայելէին այս արդիւնաբեր աշխատանքին բարիքները: Անոնք ցանուած արմտիքի արդիւնքներէն կը ստանային տոկոսային իրենց բաժինը, որ «հասըլ» կը կոչուէր:

Նոյն թուականներուն, ընդհուպ մինչեւ 1940, այս շրջանակէն ներս կը տեղաւորուին նաեւ Բալուէն ու Բաղէշէն եկած հայեր, Մերտինէն արաբախօս կաթոլիկ հայեր՝ հաստատուելով գլխաւորաբար Քամիշլի, Հասիջէ եւ շրջանակի միւս գիւղերուն մէջ:

1945ին կը յիշուին հետեւեալ գիւղերը Ուըթուըթիէ, Հլըքօ, Տալաուիէ, Տպպանա, Աուեճա, Ապու Ճալալ, Թլսում, Ճուխա, Մլուքսարա, Շամասիէ, Հմերա, Շէյխաճիլ, Ճնետիէ Մեճ, Ճնետիէ Փոքր, Չրքօ, Սլամալէք, Մասհատա, Հլելիէ, Տայօ, Հիմօ, Ճմաքէ, Ջանտա, Հարպա, Քզըլճա, Ամրի, Տերիք, Մալքիէ, Հեքքօ, Ղզըլճաղ, Թարթափ, Թէլ Քէօշէք, Թէլ Սեմիր, Վանիկ (Ուանըքէ) եւն.:

**4.- Չորրորդ փուլ.-** Կը սկսի Ալեքսանտրէթի Սանճաքին Թուրքիոյ կցումին հետեւանքով ծայր առած վերջին գաղթով: Հայ եւ օտար բարեկամներու միջնորդութիւնները եւ ձեռք առած միջոցները կը փրկեն միայն Քեսապի շրջանը, որ կը կցուի Սուրիոյ Լաթաքիոյ Նահանգին: 1939ի առաջին ամիսներէն սկսեալ Ալեքսանտրէթի, Պէյլանի եւ Սուետիոյ հայոց գաղթի ճամփան կ'անցնէր Քեսապի շրջանէն: Ալեքսանտրէթի Սանճաքի արեւելեան շրջաններու՝ Գրըգլխանի եւ Ռիհանիէի եւ անոնց շուրջ գտնուող նորաշէն հայ գիւղերու հայերը կ'անցնին Հալէպ: Նոր գաղթականներէն

ոմանք կը մնան Լաթաքիա, Քեսապ, Հալէպ, Դամասկոս, իսկ կարեւոր մէկ մասն ալ զանգուածաբար կ'անցնի Լիբանան: Քիւրտ Տաղի գիւղերու հայերը՝ Արֆալի, Վերին Թընզըրի եւն. կը ցրուին Լաթաքիոյ շրջանին մէջ<sup>33</sup>: Մուսա Լեռան Վաքըֆ գիւղը եւ Ալեքսանտրէթի ու Գրըգխանի մէջ հաւաքուած փոքրաթիւ հայեր չեն գաղթեր: Անոնց հոգեւոր հովանաւորութիւնը կը ստանձնէ Պոլսոյ Պատրիարքարանը:

Թուրքիայէն տարբեր ճամփաներով հայերու մուտքը Սուրիա կը շարունակուի մինչեւ 1950ականները:

### ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԻՒԵՐԸ 1920-1930ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Յետ երկրորդ տարագրութեան՝ 1923ի վիճակագրութեան մը համաձայն Սուրիոյ հայոց թիւը (Սուրիան Լիբանանն ալ կը ներգրաւէ) մօտաւորապէս 150,000 հոգի է, հետեւեալ բաժանումներով. Հալէպ եւ շրջակայքը՝ 90,000, Պէյրութ՝ 18,000, Դամասկոս՝ 8000, Իսկենտէրուն՝ 8000, Լիբանանի մէջ ցրուած՝ 6000, Թարապլուս-Չղարթա՝ 5000, Պէյլ(ան)՝ 3000, Պաթրուն՝ 3000, Զահլէ եւ շրջակայ գիւղեր՝ 2000, Սուր եւ Սայտա՝ 3000, Ճիւնի՝ 2500, Ղազիր՝ 1500<sup>34</sup>: Պարզ է, որ բազմաթիւ բնակավայրեր չեն ներգրաւուած այս ցանկին մէջ, եւ ատիկա հնարաւոր ալ չէր այդ պայմաններուն մէջ: Դեռ պարզ չէր, ո՛ր եւ ո՛րքան հայ խլեակներ կային մանաւանդ Սուրիոյ ամբողջ տարածքին վրայ: Կար նաեւ այն, որ Սուրիա մտնող հայ գաղթականներու հոսքը կը շարունակուէր ու միւս կողմէ՝ Սուրիոյ ճամփով ուրիշ երկիրներ անցնող գաղթականներու արտահոսք մըն ալ կը շարունակուէր նաեւ այդ եւ յաջորդ տասնամեակներուն մանաւանդ՝ դէպի Լիբանան, Յորդանան, Պաղեստին, Իրաք, Կիպրոս, Երոպա ու Հարաւային Ամերիկայի երկիրներ: Ուստի Սուրիոյ հայութեան ընդհանուր թիւերը երբեք չեն կրնար ճշգրիտ կամ նոյնիսկ մօտաւոր ըլլալ:

Մեծագոյն գաղթակայանը կը հանդիսանայ Հալէպը, մանաւանդ Կիլիկիոյ պարպումէն ետք: Սահակ կաթողիկոսէն դրկուած նամակի մը մէջ կը յայտնուի, որ 1923ին Հալէպի մէջ 50,000 բնիկ եւ տարագիր հայեր կան, մասամբ վարձու խաներու մէջ, մեծաւ մասամբ վրաններու տակ զետեղուած. «Մուհարրէմ ամիսը հասնելու վրայ է եւ ամէն ոք շուարած է, ո՛վ եւ ուրկէ՞ նոր վարձքեր պիտի վճարուին: Ըելիֆը որբանոց արհեստանոց մը ունի ինն հարիւր եւ ասելի որբերու: Բարեգործականը 100 որբերու արհեստանոց ունի»<sup>35</sup>: Նոյն թուին Ազգային Միութեան կողմէ (Տքթ. Ա. Ճեպէճեան՝ աստենադպիր եւ Գր. Վրդ. Փեհլիւանեան) Ամերիկայի Առաջնորդ Տիրայր եպիսկոպոսին դրկուած նամակին մէջ կը յայտնուի, որ Հալէպի մէջ կան ասելի քան 50,000 հայեր, որոնց 20,000ը Իզմիրի վերջին անկումէն յետոյ Անատոլուէն եւ Կիլիկիայէն եկած են<sup>36</sup>:

*Սուրիահայ Տարեցոյցը* 1923ի վիճակագրութեամբ մը հետեւեալ պատկերը կու տայ.

**Համա-Հոմս.-** Եղած են Ընդի. Պատերազմին երկու մեծ հանգուաններ հայ տարագրութեան եւ նպաստած անոնց իրենց ապրուստի աժանութեամբ եւ բնիկ ժողովուրդին աշիրէթական ասանդական եւ օրինակելի կարգ անցած հիւրասիրութեամբ: Այս երկու քաղաքները ներկայիս կը պարունակեն 1200 տարագիր հայութիւն: Համա ունի քահանայ եւ դպրոց մը 40 աշակերտով:

**Դամասկոս.-** Սուրիահայ երրորդ մեծ կեդրոնը, ներկայիս կը պարունակէ 10,000է անելի տարագիր հայութիւն մը, դպրոցը ունի 480 աշակերտ, Առաջնորդարան եւ Ազգային Միութիւն, որ տեղական եւ ֆրանսական իշխանութիւններէն ճանչցուած է պաշտօնապէս:

**Իսկենտէրուն, Պէյլան, Գրըզխան.-** Ունին շուրջ 12,000 հայութիւն մը, մեծագոյն մասամբ տարագիր: Իսկենտէրուն ունի իր եկեղեցին, Առաջնորդարանը, Ազգ. Միութիւնը, Ազգ. վարժարանը եւ ՀԲԸՄի Նուպարեան վարժարանը՝ գաղթականաց յատուկ:

Վերոյիշեալ քաղաքներէն դուրս կը մնան եւ սակայն Սուրիոյ սահմաններուն մէջ կ'իյնան Անտիոք՝ իր 200-300 տեղացի հայութիւնով, Լաթաքիա՝ 500 հայութիւն, Սուետիոյ վեց գիւղերը՝ Պիթիաս, Եղուն Օլոք, Հաճի Հապիպի, Խտրպէկ, Քապաքըլ<sup>37</sup> եւ Քեպուսիէ իրենց շուրջ 6000 հայութիւնով: Այս գիւղերը ունին եկեղեցի եւ դպրոցներ՝ ՀԲԸՄի հովանաւորութեան տակ: Աւելի հարաւը՝ Քեսապի շրջան, իր զուտ անխառն եւ բնիկ հայութիւնով, որ ունի նմանապէս իր դպրոցներն ու եկեղեցիները, 4000 հայ բնակչութիւն:

Սուրիոյ մէջ գտնուող Ազգ. եւ Նպաստամատոյցի որբանոցներու 10,000 անելի որբերն ալ հաշուելով, հայութեան թիւը կ'ըլլայ 106,000, իսկ տեղացիներն ալ միասին՝ մօտ 150,000 հայութիւն կ'ունենանք<sup>38</sup>:

Սահակ կաթողիկոս Հայ Տարագրելոց Ամերիկայի Կեդր. Նպաստամատոյց Մարմնին (ՀՏԱԿՆՄ) ուղղած իր վերոյիշեալ նամակին մէջ, կարգ մը շրջանակներու 1923ի տուեալները քիչ մը տարբեր կը ներկայացնէ:

**Համա-Հոմս.-** 1200 տարագիր: Առաջինը ունի քահանայ, որ վարձուած սենեակի մը մէջ պաշտամունք կը կատարէ եւ դպրոցի կը ծառայեցնէ: Հոմս՝ ո՛չ քահանայ եւ ոչ ալ դպրոց: Հոգեւոր մատակարարութիւնք հին ասորիները կը կատարեն, շատ քիչ անգամ այցելու քահանայ մը, պատահական:

**Լաւողիկէ եւ շրջակայք.-** 1800 տարագիրք, Երուսաղէմի վիճակ է, տեսուչ վարդապետ մը եւ արաբախօս քահանայ մը ունի, նոյնպէս եկեղեցի եւ դպրոց, որուն նպաստած է Բարեգործականը մասնաւոր գումարով մը:

**Դամասկոս.-** 11,000 տարագիր, վիճակ՝ Երուսաղէմի, ունի եկեղեցի եւ երկու տարագիր քահանայ, դպրոց 480 երկսեռ ուսանողներով:

Տարագիր հազարաւոր մանկտիք փողոցներու մէջ կը թափառին: Վարձուած հողերու վրայ՝ վրանաբնակ մեծ մասամբ: Այստեղ ալ յառաջիկային վարձու խնդիրը կը մտատանջէ տարաբաղդ տարագիրները<sup>39</sup>:

Ըստ 1928ի վիճակագրութեան մը՝ Սուրիոյ հայութեան ընդհանուր թինն է 106,231 հոգի՝ հետեւեալ պատկերով.- Հալէպ՝ 40,000, Ճարապլուս՝ 1700, Գրըզխան՝ 2500, Պէլլան՝ 400, Իսկենտէրուն՝ 5000, Ֆարթըսլի՝ 175, Քեսապ՝ 3500, Մուսատաղի գիւղեր՝ 4000, Շամ՝ 9000, Հոնմ՝ 700, Պապ՝ 175, Մումպուճ՝ 311, Րաքքա՝ 341, Անթըսաս՝ 74, Խըրփոթրաս (՝)՝ 45, Այն Արուս՝ 40, Արաբ Փունար՝ 319, Ասլանթաշ՝ 15, Տէր Զօր՝ 400, Ֆաթիճէ (՝)՝ 70, Ռասուլ Այն՝ 100, Ազէզ՝ 1000, Էքպէզ Մէլտան՝ 100, Սուետիէ քէօյլէրի (Սուէլտայի գիւղերը՝ տուրգիներու շրջան)՝ 300, Լաթաքիա՝ 1200, Քեսապի գիւղերը՝ 1000, Պանիաս՝ 60, Սելիմիէ՝ 110, Պէյթ (՝)՝ 100, Համամ՝ 60, Սովուք Օլուք եւ Աթըք՝ 300<sup>40</sup>:

Յաջորդ տասնամեակներուն, մինչեւ 1940ականները, դարձեալ՝ Սուրիոյ մէջ հայ տարրի վերաբերեալ ամբողջական մարդահամարներ ծանօթ չեն մեզի: Կան ընդհանուր մօտաւոր թիւեր: Բաւական վաւերական են 1930-40ականներու հայ առաքելական թեմական իշխանութիւններու տարեկան վիճակագրութիւնները Կաթողիկոսարանի Հասկ պաշտօնաթերթին մէջ: Հայ կաթողիկէ ու անտարանական համայնքները հազուադէպօրէն հրատարակած են նման աղիւսակներ:

#### ՍՈՒՐԻԱ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ 1920ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Հոգեւոր եւ կրթական գործը եղաւ հոս ու հոն կայք հաստատած հայութեան առաջին մտահոգութիւններէն մէկը: Այդ առումով, առաջին նախաձեռնողները եղան նախկին գաղութի համայնքային հոգեւոր իշխանութիւնները: Գաղթական հայութիւնը, որ մեծամասնութիւն կը կազմէր - գոնէ կրկնակի թիւ - չէր մտներ որեւէ թեմական հովանաւորութեան տակ, զուրկ էր թեմական որեւիցէ իշխանութեան հսկողութենէ ու ստիպուած՝ տեղւոյն պայմաններէն ելլելով կը նախաձեռնէր իր կրթական գործը կամ զայն կը յանձնէր հայ կամ օտար կազմակերպութիւններու տնօրէնութեան:

1919էն ետք Սուրիոյ մէջ գործող հայ դպրոցները ունեցան պատկանելիութեան հետեւեալ խմբաւորումները.-

1.- **Առաքելական համայնքի ծխական վարժարաններ.** վերակազմաւորուեցան հին գաղութները, բացուեցան անոնց կարգ մը ծխական վարժարանները, որոնք դրուեցան տեղւոյն թաղական խորհուրդներու հսկողութեան տակ: Այդպէս եղան Հալէպի առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց, Ալեքսանտրէթի առաջնորդական փոխանորդութեան նստավայր Ս. Գրիգոր Լուսաւորիչ,

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի տեսչութեան պատկանող Լաթաքիոյ Ս. Աստուածածին եւ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցիներու կից ազգային վարժարանները: Կաթողիկէ համայնքի նախաեղեռնեան դպրոցները մեծ մասով դրուած էին լատին Թերրա Սանթա առաքելութեան, ֆրանսացի ֆրէրներու եւ Անարատ Յղութեան Քոյրերու հսկողութեան տակ. ասոնք անկախաբար վերաբացին իրենց դպրոցները:

**2.- Ազգային Միութեան միացեալ վարժարաններ.** Կարգ մը հին գաղութներու մէջ Ազգային Միութիւնը հիմնեց հայ առաքելական եւ անետարանական համայնքներու միացեալ վարժարաններ:

Միացեալ վարժարաններու առաջին ցանցը երեւցաւ Քեսապի շրջանին մէջ տեղւոյն Ազգային Միութեան հսկողութեան տակ՝ 1919-24ականներուն: Միացեալ վարժարաններ բացուեցան Գարատուրան, Ներքի Գիւղ, Սեւ Աղբիւր, Չաքալճըք, Տուզաղաճ, Վերի Պաղճաղազ, Քէօրքիմէ եւ Էքիզօլուք գիւղերուն մէջ, ուր օգտագործուեցան դպրոցական նախկին շէնքերը<sup>41</sup>: Քեսապի դպրոցը իր աղջկանց եւ մանչերու առանձին բաժիններով նկատուեցաւ շրջանի կեդրոնական վարժարանը: Միացեալ դպրոցներու ընդհանուր տնօրէնն էր Ամերիկայի Այոուա Երկրագործական Համալսարանէն շրջանաւարտ, նախկին լեզնոնական եւ Ազգային Միութեան քարտուղար Ժոզէֆ Հեքիմեանը: 1923ին Քեսապ այցելող Սահակ կաթողիկոս Իսապայեան կը յորդորէ եւ կը պատուիրէ «*չխզել Միութիւնը եւ հոգ տանիլ իրենց զաւակաց բարուք զարգացման*»<sup>42</sup>:

1919-21 տարեշրջաններուն Սուետիոյ Ազգային Միութիւնը մէկական միացեալ դպրոցներ կը բանայ Մուսա Լեռան վեց գլխաւոր գիւղերուն մէջ՝ Հաճի Հապիպլի, Պիթիաս, Եողուն Օլուք, Իստրպէկ, Վաքըֆ, Քեպուսիէ<sup>43</sup>: Ազգային Միութեան կը գործակցին բոլոր համայնքները, բացի Իստրպէկ գիւղի Քափուչինեան վարդապետներու վարժարանէն: Վեր. Տիգրան Անդրէասեան, որ ատենապետն էր Ազգային Միութեան, կը դառնայ նաեւ միութեան բոլոր վարժարաններուն ընդհանուր տեսուչը<sup>44</sup>:

**Հալէպի** մէջ առաքելական-անետարանական միացեալ վարժարանի միակ պարագան 1919ի Սեպտեմբերին գոյացած Հայկազեան Վարժարանն է: 1921ին բաժանում կ'ըլլայ<sup>45</sup>:

Միացեալ դպրոցները, ինչպէս կ'երեւի, երկար կեանք չեն ունենար: Բաժանումին մէջ դեր ունէին գլխաւորաբար յարանուանական շահերը:

**3.- Սիսուան վարժարաններ.** 1921ին Սուետիոյ մէջ ՀԲԸՄը ստանձնեց Ազգային Միութեան միացեալ վարժարաններու ամբողջական հովանաւորութիւնը եւ զանոնք կոչեց «Սիսուան» վարժարաններ՝ ի յիշատակ Փոր Սայիտի գաղթակայանին մէջ 1915-19 տարիներուն գործած «Սիսուան» վարժարանին<sup>46</sup>: Խորքին մէջ «Սիսուան» վարժարաններն ալ միջ-յարանուանական կամ միացեալ վարժարաններ եղան: Գրեթէ բոլոր գիւղերու վարժարանները կ'ունենան երկու առանձին բաժիններ՝ աղջկանց եւ մանչերու<sup>47</sup>: 1924ին Սիսուան միացեալ վարժարանները կը

կազմալուծուին, ուստի կը վերաբացուին նախկին առաքելական, ասետարանական եւ կաթողիկէ վարժարանները:

**4.- Հայ ասետարանական վարժարաններ.** 1924ին կազմուեցաւ Մերձաւոր Արեւելքի Հայ Ասետարանական Եկեղեցիներու Միութիւնը (ՄԱՀԱԵՄ), կեդրոնը՝ Պէյրութ: Միութեան Հալէպի Սթասիոնը փաստօրէն ձեռք առաւ Սուրիոյ տարածքին գտնուող հայ ասետարանական համայնքներու վերակազմաւորման ու նոր համայնքներու ստեղծման գործը:

**5.- Միջհամայնքային միացեալ վարժարաններ.** միակ պարագան Պէյլանի մէջ պատահեցաւ. առաքելական, ասետարանական եւ կաթողիկէ համայնքները իրենց դպրոցներուն նիւթական դժուարութիւններն ու աշակերտներու թիւին նուազումը նկատի առնելով կը գործակցին եւ միասնաբար կը բանան Միացեալ Վարժարանը, 1928ին: Դպրոցը գործած է բողոքականաց շէնքին մէջ (1928-1931, 1933-1935): 1929 Մայիսին Պէյլան կ'այցելէ առաջնորդ Արտաւազդ Արք. Սիրմէեան եւ գոհ կը մնայ համերաշխութենէն: Ան քարոզած է ասետարանական եկեղեցւոյ մէջ: Դպրոցին նպաստած է պետութիւնը՝ ուսուցիչ մը տրամադրելով: Հոգաբարձական կազմին մէջ համայնքները ունեցած են երկուքական ներկայացուցիչ: Առաջին տարուան փորձը կը գոհացնէ բոլոր կողմերը. դպրոցի կարգախօսն է «Միութիւնը զօրութիւն է»<sup>48</sup>: Այդուհանդերձ՝ Միացեալ Վարժարանը կը քայքայուի եւ առանձնաբար կը սկսին գործել ազգային եւ բողոքական վարժարանները 1931-1932 եւ 1933-1935 երեք տարեշրջաններուն, սակայն ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանային Յանձնաժողովին միջամտութիւնը կը յաջողի երկու պարագային ալ վերականգնել միութիւնը<sup>49</sup>: Ասոր մէջ մեծ դեր կ'ունենայ Սուրիոյ եւ Լիբանանի Նպաստընկալ Վարժարաններու ընդհանուր տեսուչ Միքայէլ Նաթանեանի եւ Անտիոքի Թեմի առաջնորդ Իսադ Արք. Աջա-պահեանի միասնաբար տուած այցելութիւնը 1934 Դեկտ. 13ին<sup>50</sup>:

Միջհամայնքային միացեալ վարժարաններու նման փորձի ուրիշ տեղ մենք չենք հանդիպած, հակառակ անոր որ նման անհրաժեշտութիւն միշտ խօսակցութեան նիւթ եղած է այնտեղ՝ ուր երկու կամ երեք յարանուանական փոքրիկ դպրոցներ խանգարած են կանոնաւոր կրթութեան ընթացքը:

**6.- Կառավարական դպրոցներու ցանց.** 1926ին, երբ կը դադրին Սուետիոյ Սիսուան վարժարանները ու ՀԲԸՄի կրթական նպաստը կը կասի, ասետարանականները կը վերաբանան իրենց **Պիթիասի** եւ **Եողուն Օլուքի** ասետարանական վարժարանները: Ասոնց կը նպաստէ Ամերիկեան միսիոնարութիւնը, իսկ Հաճի Հապիպլի, Պիթիաս, Եողուն Օլուք, Քեպուսիէ, Խտրպէկ, ՎաքըՖ եւ Պէյլանի Սովուք Օլուք գիւղերու առաքելական վարժարանները 1926-28 կը դառնան լրիւ կառավարական վարժարաններ, անոնց նիւթական ամբողջ մատակարարումը Սուրիոյ

տեղական կառավարութիւնը կը ստանձնէ<sup>51</sup>: Կառավարական նպաստընկալ վարժարանները չեն գոհացներ տեղւոյն թաղական խորհուրդները, որոնք իրենց հսկողութեան տակ կ'անոնեն զանոնք. միայն Պիթիասի եւ Սովուք Օլուքի առաքելական վարժարանները մինչեւ վերջ կը մնան կառավարական դպրոցներ:

Բուն գաղթականներու շրջանակին մէջ դպրոցական գործը կատարուեցաւ զանազան եղանակներով:

**7.- Ազգային վարժարանի թաղային մասնաճիւղեր.** Դամասկոսի հայոց Ազգային Միութիւնը տեղւոյն Ս. Սարգիս Եկեղեցւոյ եւ Հոգետան Երուսաղէմի տեսչութեան համատեղ ջանքերով գաղթականներու միջավայրին մէջ բացաւ փոքրիկ դպրոցներ իբրեւ մասնաճիւղը գաղութի վերաբացուած հին վարժարանին<sup>52</sup>: Անոնք այդպէս գործեցին մինչեւ անոնցմէ ոմանց լրիւ անկախացումը իբրեւ ազգային կամ միութենական ցանցերու պատկանող վարժարաններ:

**8.- Հայրենակցական վարժարաններ.** ասոնք հիմնուեցան ու կառավարուեցան հայրենակցական միութիւններու արտասահմանեան եւ տեղական մասնաճիւղերու միջոցով (Հալէպ, Դամասկոս, Ալեքսանտրէթ): Հայրենակցական դպրոցները գլխաւորաբար գործեցին 1920-30ականներուն՝ հայրենակցական հիմունքով կազմուած հիւղաւաններու մէջ: Հալէպի մէջ եղան Չարսանճաքի, Եղեսեցւոց, Մալաթիոյ, Խարբերդի, Դատեմի<sup>53</sup>, իսկ Դամասկոսի մէջ՝ Այնթապի եւ Մարաշի հայրենակցական միութիւններու դպրոցներ:

Հայրենակցական վարժարանները երկար կեանք չունեցան, ոմանք գոյատեւեցին շուրջ տասնամեակ մը, որովհետեւ գաւառական նեղ շրջանակներու գործունէութիւնը չբաջալերուեցաւ: Հայրենակցականները նախընտրեցին փակել իրենց վարժարանները, չքաւոր ընտանիքներու զաւակներուն կրթաթոշակ տրամադրելով. իսկ ուրիշներ սկիզբէն դուրս ելլելով հայրենակցական նեղ շրջանակէն դարձան յարանուանական (ազգային ու արեւտարանական), միութենական կամ կուսակցական եւ նոյնիսկ անհատական վարժարաններ:

**9.- Միութենական վարժարաններ.** ասոնք ընդհանրապէս հայրենակցական հիմքով վարժարաններ են, որոնք շուտով զաղափարական-մանկավարժական ինչ-ինչ տեսիլքներով կը սկսին անկախաբար գործել: Ասոնցմէ են.-

- **Կիլիկեան վարժարաններ,** 1921էն սկսեալ գոյացած դպրոցական ցանց Հալէպի մէջ, հիմնուած Կիլիկեան Նպաստից Միութեան (ապա՝ Կիլիկեան Միութիւն) կողմէ: Մինչեւ 1928՝ կոչուած են Կիլիկեան Գաղթականաց Վարժարաններ: Միութիւնը ունեցած է չորս դպրոց: Այս շրջանակին մէջ կը գործեն ՀՄՄը ու Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը: Կիլիկեան Վարժարանները կ'ընդունին Դամասկոսի Թեմի հոգեւոր գերատեսչութիւնը<sup>54</sup>:

- **Կրթասիրաց վարժարան**, հիմնուած 1924ին, Այնթապցիներու Հայրենակցական Միութենէն անջատուած Կրթասիրաց Միութեան կողմէ, որ կը կը ծրագրէ ոչ-հայրենակցական, ոչ-կուսակցական եւ ոչ-յարանուանական հիմունքներով տանիլ ազգային, մշակութային եւ կրթական գործունէութիւն: Կը հետեւի ազգային վարժարաններու Ուսումնական Խորհուրդի ծրագիրերուն:

- **Քեսապի Ուսումնասիրաց Երկրորդական վարժարան**, հիմնուած 1925ին Քեսապի Ուսումնասիրաց Միութեան կողմէ, որ ձգտած է կրթութիւնը ազատել յարանուանական մրցակցութենէն: Օգտուելով Քեսապի Ազգային Միութեան միացեալ վարժարաններու բացումէն, 1925ին Քեսապի մէջ կը հիմնէ Ուսումնասիրաց Երկրորդական Վարժարանը, որ մինչեւ 40ականները մեծ թիւով ուսուցիչներ կը տրամադրէ սուրիահայ դպրոցներուն: Ան 1938ին կը միանայ միացեալ վարժարանին՝ իբրեւ Միացեալ-Ուսումնասիրաց վարժարան ու կը կորսնցնէ իր երկրորդական բաժինը, իսկ 1948ին կը մտնէ ազգային վարժարաններու ցանցին մէջ<sup>55</sup>:

- **Հալէպի Ուսումնասիրաց Վարժարաններ**. Ուսումնասիրաց Միութիւնը Հալէպի մէջ սկզբնապէս այնթապցի ատետարանականներու միութիւն է, որուն տէրն ու տիրականը կը դառնայ Լեւոն Յ. Լեւոնեան<sup>56</sup>, 1925ին: Միութիւնը կրթական, մշակութային ու մարդասիրական աշխատանքներ կը ծաւալէ ոչ-յարանուանական, ոչ-հայրենակցական եւ ոչ-կուսակցական սկզբունքներով. ունի դպրոցական ցանց<sup>57</sup>: Լեւոնեանի մահէն ետք իր հիմնած դպրոցներէն երկուքը կը մնան. Շապուրայի վարժարանին տիրութիւն կ'ընէ Սարգիս Պալապանեանը եւ դպրոցը կը վերանուանէ Լեւոնեան-Ուսումնասիրաց Վարժարան, կը գործէ մինչեւ 1957, իսկ Նոր Գիւղի Ուսումնասիրաց Վարժարանը (հիմնուած՝ 1930ին), 1947ին կը մտնէ ազգային վարժարաններու ցանցին մէջ ու կը գործէ մինչեւ 1967:

10.- **Գաղթային ազգային վարժարաններ**. ասոնք հոս ու հոն ի մի եկած հայ գաղթականներ բացին մատռան մը, կամ եկեղեցւոյ մը կողքին, ունեցան քահանայ, որ նաեւ դպրոցի ուսուցիչ կ'ըլլար: Եկեղեցին ու դպրոցը դրուեցան թաղական խորհուրդի հսկողութեան տակ: Այդպիսի վարժարանները շատ էին Տէր Զօրի, Հիւսիսային Սուրիոյ նորահաստատ բնակավայրերու, Հալէպի, Համայի ու Հոմսի մէջ: Այս համայնքները տեղ-տեղ ունէին հայրենակցական երանգ. անոնց եկեղեցիները կը կրէին իրենց հայրենի բնակավայրի եկեղեցւոյ անունը, ինչպէս Հալէպի Համիտիէի հիւղաւանի մարաշցիներու Ս. Իսաչ, Ասորի Քեմփի աշտոցիներու Ս. Յակոբ եկեղեցիները են.:

Գաղթային վարժարաններէն շատեր կը գործէին Սահակ կաթողիկոսին անմիջական կարգադրութեամբ: Անոր միջոցով կ'ունենան հոգեւոր հովիւ,

նպաստներ կը ստանան ՀՏԱԿՆՄԷն ու ՀԲԸՄԷն: Ասոնք յետոյ կը մտնեն թեմական ազգային վարժարաններու ցանցերուն մէջ:

11.- **Գաղթային նպաստամատոյց կազմակերպութիւններու եւ հոգեւոր առաքելութիւններու վարժարաններ.** 1920ականներէն սկսեալ միջազգային բարեսիրական կազմակերպութիւններ ու միսիոնարական միաբանութիւններ միշտ ներկայութիւն մը եղած են հայ կրթական կեանքին մէջ. անոնցմէ ոմանք Սուրիոյ հայութեան մէջ կը գործէին դեռ 19րդ դարու կէսերէն սկսեալ: Այսպէս՝

- **Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը** (Near East Relief) բարեսիրական այլեայլ ծառայութիւններու կողքին նաեւ նպաստած է հայ դպրոցին կամ բացած գաղթային վարժարաններ Համաշխարհային Ա. Պատերազմէն անմիջապէս ետք՝ Ալեքսանտրէթի եւ Հալէպի մէջ: Քանի մը տարի ետք ասոնք փոխանցուեցան աւետարանական եւ առաքելական համայնքներուն:

- **Տրանսական Լազարիստ Միաբանութիւնը** 1920ականներուն դպրոցներ ունի Գրըզխանի եւ Դամասկոսի հայ գաղթականներուն համար:

- **Գերմանական Լեփսիս Ընկերութիւնը** 1932էն 1939 որբանոց-դպրոց մը կը պահէ Քեսապի մէջ՝ այլ տեղերէ բերուած որբ-որբուհիներու համար:

- **Քափուչինեան Հայրերը** Խտրապէկի մէջ դպրոց կը պահեն 1887էն 1939:

- **Ամերիկեան Առաքելութիւնը** (Պորտ) մեծ դեր ունեցած է հայոց մէջ հայ աւետարանական շարժման տարածման, համայնքներու կազմաւորման, եկեղեցական ու կրթական գործին մէջ: Սուրիոյ նոր գաղութին մէջ նոյնպէս ներկայութիւն մըն է անիկա, թէեւ բոլոր քրիստոնեայ համայնքներուն մէջ որոշ պարագաներու միացեալ ձեւով աշխատելու առաքելութեամբ: Անոր քաղաքականութիւնը հայ համայնքին մէջ ընդլուծում կը յառաջացնէ: Ալեփսիս Քոլէճի հիմնադրութենէն ետք Պորտի այդ քաղաքականութիւնն ալ պատճառ հանդիսացած է, որ հայ աւետարանական միւս դպրոցները երկրորդական բաժին պահելու իրենց փորձին մէջ ձախողութեան հանդիպին:

- **Յիսուսեան Միաբանութեան** հայ եւ օտար հայրերը մեծ ներկայութիւն մը կ'ըլլան Սուրիոյ մէջ ու կը հիմնեն կեդրոններ նաեւ հայ գաղթականներու շրջանակին մէջ՝ տանելով մարդասիրական եւ կրթական գործունէութիւն՝ Գրըզխան, Դամասկոս, Հալէպ:

- **Տրանսիսկեան Թէր Սանթ Առաքելութիւնը** Սուրիոյ մէջ ստեղծած էր նաեւ լատին համայնքներ ոչ միայն խառն, այլեւ զուտ հայաբնակ շրջանակներու մէջ, ինչպէս՝ Քեսապ, Գնիէ, Եագուպիէ, Հալէպ: Հայերէ եւ ոչ-հայերէ կազմուած լատին համայնքներու, ինչպէս նաեւ արաբախօս հայ գիւղերու իրենց դպրոցներուն մէջ հայերէնի ուսուցում չէր արտօներ, ինչ որ ազգային ինքնութեան խնդիր կը ստեղծէր, ինչպէս է պարագան Գնիէի եւ Եագուպիէի լատին համայնքներուն մէջ:

**12.- Հայ Կաթողիկէ Անարատ Յղութեան Քերց Միաբանութեան վարժարաններ.** Անարատ Յղութեան Քերց Միաբանութիւնը առհասարակ կը ստանձնէ հայ կաթողիկէ համայնքի աղջկանց, իսկ տեղ-տեղ նաեւ երկսեռ վարժարաններու գերատեսչութիւնը՝ Հալէպ, Դամասկոս, Քեսապ եւն.<sup>58</sup>:

**13.- ՀԲԸՄի վարժարաններ.** 1920ականներուն, որքան յայտնի է մեզի, ՀԲԸՄը իբրեւ սեփական միութենական վարժարաններ ունի Սուեփոյ *Միտուան* վարժարաններու ցանցը (1921-1925) եւ Ալեքսանտրէթի Նուպարեան Վարժարանը: 1930ականներէն սկսեալ միութեան տեղական մասնաճիւղերու խնամակալութեան յանձնուած Ազգային նպաստընկալ վարժարաններու ցանց մը կը ստեղծուի: Միութիւնը կ'օգնէ առաքելական եւ աւետարանական գրեթէ բոլոր կրթական եւ եկեղեցական ձեռնարկներուն: Ան սեփական դպրոցական ցանց մը կը ստեղծէ 1950ականներուն միայն:

**14.- Անհատական վարժարաններ** խումբին մէջ կը դնենք Յակոբ Պոռոունսուզեանի Հալէպի Արմէնեան վարժարաններու ցանցը միայն:

#### **Դ.- Դպրոցներու ցանցերը համայնքներու թեմական իշխանութիւններու վերակազմութենէն ետք**

1920ականներու սուրիահայ դպրոցի այս բազմազանութիւնը լուրջ մտահոգութիւններու դուռ կը բանար ազգային-յարանուանական ճակատներու վրայ: Հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական համայնքներու մէջ ատիկա օրակարգի կը բերէր Սուրիոյ մէջ հայ երեք համայնքներու վերակազմութեան խնդիրը: Համայնքային թեմական կեդրոնական իշխանութիւնները պիտի կրնային ուղղակի հսկողութեան տակ առնել իրենց համայնքներու եկեղեցական-դպրոցական ու մշակութային գործերը, հիմնել նոր օղակներ: Միւս կողմէ կար նաեւ այլ հոսանք մը, որ յարանուանական իշխանութիւններէն դուրս դնել կ'ուզէր կրթական գործը, այդպիսով նաեւ պայքարելով օտար միսիոնարական ազդեցութիւններուն դէմ ու ապահովել աւելի կայուն ազգային դաստիարակութիւն. ատիկա յատկապէս շեշտուած էր Քեսապի Ոսումնասիրաց եւ Հալէպի Ոսումնասիրաց, Կրթասիրաց եւ Կիլիկեան միութիւններու գործունէութեան մէջ:

Սուրիոյ մէջ համայնքային թեմական վերակազմութեան առաջին քայլը առին հայ աւետարանականները: Սկզբնական քանի մը տարիներուն աւետարանական համայնքներու կազմակերպումը առանձին հոգեւոր գործիչներու նախաձեռնութիւնը եղաւ, առաքելական համայնքին հետ միացեալ վարժարաններու հիմնումը՝ նոյնպէս: ՄԱՀԱԵՄի Հալէպի Սթասիոնը փաստօրէն ձեռք առաւ Սուրիոյ տարածքին գտնուող հայ աւետարանական համայնքներու վերակազմաւորման ու նոր համայնքներու ստեղծման գործը: Սուրիոյ աւետարանական համայնքները

մեծ մասով կու գան հին գաղութն՝ կազմաւորուած ըլլալով 19րդ դարու կէսերէն սկսեալ: Մէկական աւետարանական դպրոցներ գործեցին Պէյլանի, Ֆարթըսլիի, Ալեքսանտրէթի, Գրըգխանի, Սուետիոյ մէջ՝ Պիթիասի, Եողուն Օլուքի, Քեսապի մէջ՝ Քեսապի, Գարատուրանի, Սեւ Աղբիւրի, Քէօրքիւնէի, Էքիզօլուքի եւ Վերի Պաղճաղագի մէջ: Վերաբացուեցաւ Հալէպի նախկին վարժարանը, հիմնուեցան չորս ուրիշներ եւս, մէկական դպրոցներ գործեցին նաեւ Դամասկոսի, Հոմսի, Ազէզի, Ճարապլուսի մէջ: Աւետարանական համայնքներ կազմելու փորձ եղած է Լաթաքիոյ, Իտլիպի, Հասիչէի, Քամիշլիի եւ Տերիքի մէջ, ուր սակայն դպրոցական անկախ գործ չէ յաջողած<sup>59</sup>:

Աւետարանական համայնքի հոգեւոր ու կրթական գործին մէջ կը նկատուին հետեւեալ պարագաները.-

ա) Աւետարանական համայնքի նորակազմ համայնքները գլխաւորաբար թրքախօս հայերէ կազմուած էին: Պաշտամունքներուն որոշ երգեցողութիւն ու քարոզ եւ նոյնիսկ դպրոցական հանդէսներուն մէջ թրքերէն բաժին կ'ըլլար: Աւետարանական համայնքի *Նոր Աւերաբեր* հանդէսը ունէր հայատառ թրքերէն տարբերակ, նոյնպէս հոգեւոր գրականութիւն: Համայնքը մեծ ճիգ թափեց ու մինչեւ 1950ականները գրական հայերէնը ընդհանրացուց իր համայնքի եկեղեցական ու կրթական հաստատութիւններուն մէջ:

բ) Աւետարանական համայնքի եկեղեցական եւ կրթական գործին մէջ ներկայութիւն եղած է Ամերիկեան միսիոնարութիւնը: Համայնքային գործերը - հակառակ շատերու կամքին - կը կրէին Հալէպի Սթասիոնի ամերիկացի միսիոնարներու ազդու միջամտութիւնը: Նախակրթարանները եթէ լիովին դրուած էին համայնքի կամ ՀԱԵՄի հովանիին տակ, ապա *հայ սքուլները* (երկրորդական վարժարան) կը գործէին Պորտի տրամադրութեան համաձայն: Այսպէս, Հալէպի մէջ Մուսալլաթ թաղի Էմմանուէլ նախակրթարանի բացումէն անմիջապէս ետք կը ծրագրուի ունենալ աղջկանց եւ մանչերու երկրորդական բաժիններ, որոնք կը դրուին անջատ տեսչութեանց ներքեւ: Աղջկանց վարժարանը (1922-36), իբրեւ Այնթապի Աղջկանց Սեմինարիի շարունակութիւնը, կը դրուի Պորտի հսկողութեան տակ, թէեւ արտօնութիւնը կը պատկանի հայ աւետարանական համայնքին, իսկ մանչերու երկրորդական վարժարանը՝ համայնքի (1923-36): Երկրորդական բաժինները բարեյաջող ընթացք կ'ունենան: Մէջտեղ կը դրուի Այնթապի Քուլէճը վերականգնելու ծրագիրը: Ամերիկեան Պորտը պայման կը դնէ քուլէճը միջազգային դարձնելու իր կամքը, հայ համայնքը կ'ընդդիմանայ, վերջիվերջոյ տեղի կու տայ: 1936ին Ալեկիփօ Քուլէճը կը դրուի չորս կողմերու սեփականութեան տակ՝ ՀԱԵՄ, Արաբ Երիցական Եկեղեցւոյ, Երիցական եւ Ամերիկեան Պորտերու: Այս կարգադրութենէն դժգոհ՝ քաղաքի Էմմանուէլ եւ հիւղաւանի Բեթէլ վարժարանները կը փորձեն դառնալ լրիւ երկրորդական վարժարաններ,

բայց չեն յաջողիր: Ալեկսիո Քոլէճը կ'ունենայ համալսարանական ֆրեշմէն ու սոֆոմոր կարգերը: Հայերէնի դասերը կը շարունակուին մինչեւ 1962<sup>60</sup>:

Աւետարանական վարժարաններու մէջ առաջնահերթութիւն կը տրուէր անգլերէնի ուսուցման, որով շրջանաւարտները կը մտնէին Ալեկսիո Քոլէճ, Պէյրութի Ամերիկեան Համալսարան ու Աստուածաբանական Քոլէճ, որուն բաժնետէրերէն մէկը Հայ Աւետարանական Եկեղեցին էր:

գ) Աւետարանական համայնքի ծոցին մէջ երբեմն նկատուած են աղանդաւորական կամ բողոքական այլ հոսանքներէ եկած անջատողական նկրտումներ: Այս ալ ստեղծած է եկեղեցական եւ կրթական գործի անջատում: Հալէպի մէջ ստեղծուած է Հոգեւոր Եղբայրութեան Կեդրոն, որ ունեցած է իր *Կենսաց* դպրոցները (1944-67), իսկ Դամասկոսի մէջ ստեղծուած է *Նազարին* Միաբանութեան յարող հատուած մը, որ շրջան մը ձեռք դրած է եկեղեցւոյ եւ դպրոցին վրայ՝ զայն վերանուանելով Նազովրեցի Եկեղեցի (1946-62)<sup>61</sup>:

դ) Հայ Աւետարանական Եկեղեցին միայն 1920ականներու սկիզբը կրթական գործին մէջ միասնական քայլերու դիմած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ հետ: Յետագային փորձած է միացեալ կրթական գործ կատարել այլ քրիստոնեայ հաւաքականութիւններու հետ: Այդպիսի յաջողած պարագայ մը կարելի է նկատել Հալէպի Բեդիեզղա Վարժարանը՝ Ասորի քեմիի ուրֆացի հայախօս ասորիներու եւ հայ աւետարանականներու միացեալ դպրոցը, նաեւ Հոմսի դպրոցի պարագան, որ գործած է իբրեւ արաբ աւետարանական վարժարանին մասնաճիւղը: Արաբ բողոքական եկեղեցիներու հետ միացեալ կրթական գործ փորձուած է Լաթաքիա, Քամիշլի, Հասիչէ, բայց չէ յաջողած: Արաբախօս հայ բողոքականները ցրուած են արաբ եկեղեցիներու մէջ: Ոչ-արդիւնաւէտ կարելի է համարել Միս Հետվիկ Պիլի գլխաւորած աւետարանչական գործին մէջ Հասիչէի մէջ սկսած իրենց կրթական գործը եւս: Ներկայիս հարց է այդ արաբախօս հայոց ազգային ինքնութեան վերահաստատման խնդիրը:

ե) 1920-30ականներուն ազգայնական հոսանք մը ալեկոծեց աւետարանական համայնքի կարգ մը շրջանակները: Եղան բաժանումներ, ապա մայր համայնքին վերադառնալու զանգուածային երեւոյթներ: Ատիկա նախ երեւցաւ Հալէպի մէջ, ուր Լետոնեանի գլխաւորած Ուսումնասիրաց Միութիւնը անջատուեցաւ Էմմանուէլ եկեղեցւոյ շրջանակէն ու հիմնեց Ուսումնասիրաց վարժարաններու իր ցանցը: Նման երեւոյթ աւելի սուր կերպով երեւցաւ Քեսապի շրջանին մէջ, որուն հետեանքով ստեղծուեցաւ Սուրիահայ Օգնութեան Խաչի հովանաւորութիւնը կողմ Միացեալ վարժարաններու նոր ցանց մը<sup>62</sup>: Այս ցնցումներուն՝ Հայ Աւետարանական Եկեղեցին կարողացաւ պահել իր հաստատութիւնները եւ աւելի աշարջութեամբ վերաբերեցաւ հայերէնի եւ հայերէնաւանդ նիւթերու ուսուցման ու ազգային դաստիարակութեան գործին: Նկատուած է, որ գէթ մինչեւ 1980ականները՝ Հայ

Անտարանական Համայնքի աշակերտության շուրջ կեսը կու գար առաքելական ընտանիքներէն:

1920ականներուն կը վերակազմուին **հայ կաթողիկէ համայնք**ներուն Հալէպի եւ Դամասկոսի թեմերը: Հայ Կաթողիկէ եկեղեցին հիմնուած է 1740ին Հալէպի մէջ, որ եղած է Տանն Կիլիկիոյ Պատրիարքութեան առաջին նստավայրը, ապա փոխադրուած է Զմմառ, Լիբանան: Այնուհետեւ Հալէպը եղած է առանձին թեմ՝ արքեպիսկոպոսոսութիւն, որ ընդգրկած է Սուրիոյ հիւսիս-արեւմտեան շրջանը՝ Հալէպի, Իտլիպի, Լաթաքիոյ, Թարթոսի, Համայի, Հոմսի եւ Ռաքքայի նահանգները: Թեմը Հալէպի մէջ առաջնորդանիստ եկեղեցիէն բացի՝ նոր շրջանին ունեցած է եւս երեք եկեղեցիներ, հատ մըն ալ Ճարապլուսի մէջ: Դպրոցները կեդրոնացած են Հալէպի մէջ, մէկական դպրոցներ գործած են Ճարապլուս, ու կարճ ժամանակով նաեւ Հոմսի ու Ռաքքայի մէջ: 19րդ դարէն իվեր առանձին թեմ է նաեւ Դամասկոսի Առաջնորդութիւնը, որուն կից գործող վարժարաններն ալ կու գան այդ օրերէն: 19րդ դարուն եղած է նաեւ Անտիոքի Թեմը, որուն քայքայումէն ետք թեմի համայնքները կապուած են ուղղակի Պատրիարքութեան, ինչպէս է ներկայիս այդ շրջանակէն մնացած Քեսապի շրջանը՝ մէկ եկեղեցիով ու դպրոցով: Տէր Զօրի համայնքը Մեծ Եղեռնէն առաջ կ'իյնար Մերտինի Հայ Կաթողիկէ Առաջնորդութեան ծիրէն ներս՝ մէկ եկեղեցիով ու դպրոցով:

Հայ Կաթողիկէ Համայնքի Ճեզիրէի եւ Եփրատի Թեմի (ընդհանրապէս արաբախօս), առաջին կազմակերպիչը կը հանդիսանայ Կիւրեղ Եպս. Զոհրապեան, որ 1938էն սկսեալ եռանդուն գործունէութիւն կ'ունենայ շրջանին մէջ: Անոր մասին գրուած է. *«Քամիշլիի թեմը կարելի եղաւ ուրքի հանել նախկին պատրիարքական փոխանորդ Կիւրեղ Եպս. Զոհրապեանի ջանքերով: 15 տարի անդով աշխատանքով ան մէջտեղ բերաւ բազմաթիւ եկեղեցիներ ու դպրոցներ, ամէնուն հիացումը հրաւիրելով իր առաքելական եռանդին եւ յաջողութիւններուն վրայ»*<sup>63</sup>: 1940ին կը հիմնուի Ճեզիրէի եւ Եփրատի թեմը, որուն առաջին գահակալը կ'ըլլայ Կիւրեղ Եպս. Զոհրապեան, իսկ նստավայրը՝ Հասիչէ: Թեմի վիճակներն էին Տէր Զօր, Հասիչէ, Քամիշլի, Տրպեսիէ, Արաբ Փունար, Հելեքոյ, Ամուտա: Այս վայրերուն մէջ դպրոցներ գործած են: 1954ին թեմի կեդրոնը կը տեղափոխուի Քամիշլի: Առաջին թեմակալը կ'ըլլայ Յովսէփ Եպս. Ծենանճին<sup>64</sup>: Թեմը ներկայիս կը կոչուի Վերին Ճեզիրէի Թեմ:

Հայ Կաթողիկէ Համայնքի դպրոցները կը բացայայտեն քանի մը առանձնայատկութիւններ.-

ա) Նկատուած է, որ յատկապէս ֆրանսական իշխանութեան շրջանին եւ անկէ ետք ալ, հայ կաթողիկէ վարժարանները առաջնային նկատած են ֆրանսական եւ արաբական պետական ծրագիրերու իրագործումը սերթիֆիքայի, պրէզիդի եւ պաքալորէայի պետական քննութեանց մէջ:

Ասիկա մեծ առաելութիւններ կ'ապահովէր շրջանաւարտներուն՝ համալսարանական ուսում ու պաշտօններ ձեռք բերելու համար:

բ) Հայ կաթողիկէ վարժարանները օրէնքով կ'իյնան հայ կաթողիկէ ժողովրդապետութեան հսկողութեան տակ եւ կը կոչուին հայ կաթողիկէ ժողովրդապետութեան վարժարաններ: Սակայն շատ վայրերու մէջ Հայ Կաթողիկէ Համայնքի վարժարանները դրուած են տարաբնոյթ գերատեսչութիւններու հսկողութեան տակ. այսպէս՝

- Աղջկանց վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են Անարատ Յղութեան Քերց Միաբանութեան:

- Մանչերու վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են օտար առաքելութիւններու հսկողութեան՝ ֆրանսացի ֆրէրներու, Ֆրանչիսկեան, Լազարիստ, Քափուչինեան վարդապետներու: Այս ալ բնականաբար առաջնահերթութիւն տուած է կրթական ընթացիկ ծրագիրներու: Արաբախօս իր զանգուածներուն հայեցի դաստիարակութեան ու հայերէնի ուսուցման հարցով միշտ անլին ակնկալուած է կաթողիկէ դպրոցներէն. 1928ին Տոքթ. Յակոբ Թօփճեան կը գրէ. «Հալէպի հայ կաթողիկէներուն կը պատկանի Հալէպի մեծ դպրոցը, որ թէեւ Հալէպի Առաջնորդին հսկողութեան տակ կը գործուի, սակայն ֆրանսացի ֆրէրներ զայն կը վարեն: Այստեղ կը յաճախեն 5-700 մանչեր ամէն ազգէ: Դպրոցական դաստիարակութեան լեզուն ֆրանսերէն է: Հայ աշակերտներուն կ'աւանդուին հայերէն եւ հայոց պատմութիւն: Այս դպրոցը հայացնելու համար մասնաւոր խնամք տանելու է»<sup>65</sup>: Այդ հարցով բողոքներ ու ընդվզումներ եղած են համայնքին մէջ եւս: Անպաշտօն դրուածքով՝ Հալէպի մէջ կայ արաբախօս եւ հայախօս կաթողիկէ վարժարաններու զատորոշում:

Սուրիոյ յետանկախացման շրջանին (1946) պետական օրէնքով արգելք դրուեցաւ օտար առաքելութիւններու կրթական գործունէութեան վրայ ու այս դպրոցները անցան հայ կաթողիկէ ժողովրդապետութեան եւ Անարատ Յղութեան Քերց Միաբանութեան հսկողութեան: Սակայն անկէ ետք արաբ ու ասորի դպրոցներու հետ միացեալ վարժարաններու երեսոյթը երեւան եկաւ: Այդպիսի միացեալ վարժարաններ դարձած են Ճարապլուսի, Հասիչի, Տրպեսիէի, Ամուտայի հայ կաթողիկէ վարժարանները: Այս միացումները ունեցած են ձեական նշանակութիւն: Այդ դպրոցներուն մէջ հայերէն չէ դաստիարակուած:

- Մխիթարեան Միաբանութիւնը 1935ին Հալէպի մէջ հիմնեց իր դպրոցը, որ ցարդ կը գործէ՝ 1967-73 տարիներու ընդհատումով մը:

դ) Դեռ նախաեղեռնեան շրջանէն հայկական բնակավայրերու մէջ գոյացած էին նաեւ լատին համայնքներ, ինչպէս՝ Պէլլան, Խտրպէկ, Քեսապ, Վարի Պաղճաղազ, հայ կաթողիկէ համայնքներու կողքին: Երկու այլաձէս կաթողիկէ համայնքներ ունեցող բնակավայրերու մէջ կրթական գործը միացեալ էր ու դրուած էր Լատին Համայնքի վարդապետներու

հսկողութեան տակ: Այդ դպրոցներուն մէջ հայերէնի ուսուցում կար: Լատին-հայ կաթողիկէ վարժարաններու բաւական մեծ ցանց մը կար Քեսապի շրջանին մէջ՝ Քեսապ, Չինար, Գարատուրան՝ երկու դպրոց, Վերի Պաղճաղագ, Վարի Պաղճաղագ: 1930ականներու ազգայնական շարժումը կը թափանցէ Քեսապի հայ կաթողիկէ եւ լատին համայնքներէն ներս: Կաթողիկէ համայնքը տրամադիր է իր կրթական գործը ետ խլել լատին հայրերու մենաշնորհէն: Խլրտումներ կը սկսին նոյնիսկ աշակերտութեան մէջ: 1944ին մանչերու վարժարանէն խումբ մը աշակերտներ կը հեռանան դպրոցէն հայոց պատմութեան դասանիւթին բացակայութեան դէմ բողոքելու համար: Կաթողիկէ համայնքի հովիւ Հ. Թովմաս Քաջազունի քանի մը օգնական ուսուցիչներով՝ ասոնց համար կը բանայ առանձին դպրոց մը համայնքին պատկանող շէնքին մէջ, հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կից: Դպրոցը գործած է քանի մը ամիս՝ մինչեւ որ կրկին հասկացողութիւն գոյացած է լատին հայրերուն հետ: Հայոց պատմութիւնը դարձած է դասանիւթ: 1946ին լատին համայնքը պապական հրովարտակով կը լուծուի Քեսապի շրջանին մէջ: Տեղւոյն բոլոր դպրոցները կ'անցնին հայ կաթողիկէ ժողովրդապետութեան: Կը կազմուի նաեւ Վարի Պաղճաղագի ժողովրդապետութիւնը, որ կարճատեւ կեանք կ'ունենայ:

1906էն իվեր ամբողջապէս լատինացած հայ գիւղ է Գնիէն: Հայ առաքելական համայնքի մը կողքին լատին համայնք մըն ալ գոյացած է Եագուպիէ գիւղին մէջ: Ծագումով հայ այս լատին համայնքներուն մէջ նման տեղաշարժ տեղի չ'ունենար: Արաբախօս Գնիէ եւ Եագուպիէ գիւղերու լատինաց վարժարաններուն մէջ հայերէն չէ դասաւանդուած: Հայերէնի ուսուցում չկար նաեւ այն բնակավայրերու լատին դպրոցներուն մէջ, ուր ծագումով հայ լատինները կը մտնէին տեղւոյն բազմազգ ծագումով լատին համայնքներուն մէջ, ինչպէս՝ Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա: Այս վայրերու լատինացած հայերը իրենց կապերը կտրած են հայ ինքնութենէն:

Կաթողիկ օտար միաբանութիւններ Սուրիոյ մէջ ունէին նաեւ կրթական անկախ հաստատութիւններ, ինչպէս Լազարիստները, Քափուչիներն ու Ֆրանչիսկեան վարդապետները, Տոմինիկեանները, Յիսուսեանները: Լազարիստները իրենց կարգ մը դպրոցներուն մէջ (Գրըգխան եւ Դամասկոս) ունէին նաեւ հայերէնի ուսուցում: Քափուչիներն վարդապետները կը վարէին Մուսա Լեռան Խտրպէկ գիւղի դպրոցը: Հալէպի մէջ լատին ֆրանչիսկեան հայրերու խնամակալութեան յանձնուած է «Փէր Պալեանի դպրոց»ը, ուր հայ աշակերտութեան հայերէն դասեր կը տրուին մինչեւ հիմա: Աւելի մեծ եղաւ Յիսուսեան միաբանութեան վարդապետներու դերը հայ գաղթականութեան միջավայրին մէջ՝ Գրըգխան, Հալէպ, Հոմս, Դամասկոս: Յայտնի են անոնց Գրըգխանի վարժարանը, որ յետոյ փոխադրուեցաւ Հալէպ, իբրեւ՝ Սրբոց Վարդանանց Վարժարան (1935-67, 1973-84), Հալէպի «Հայ Քեմիերու Առաքելութեան

Վարժարաններ»ը (1925), որ 1930ին փոխանցուեցան Անարատ Յղութեան Հայ Քոյրերուն՝ իբրեւ Սրբուհի Վառվառիա Վարժարան (1965էն՝ Զուարթնոց Վարժարան), Դամասկոսի մէջ՝ «Ֆրանսահայ Դպրոց»ը (1922-39) են.:

**Հայ առաքելական համայնքը** 1920ականներուն պահեց նախաեղեռնեան իր պատկերը: 1924ին Բերիոյ Թեմի Ազգային Գաւառական Ժողովի ընտրութիւններուն գաղթականները չմասնակցեցան: Ընտրութիւնները միայն տեղացի 200 ընտանիքներու քուէով եղած են<sup>66</sup>:

Լաթաքիոյ սաղիմապատկան տեսուչը շարունակեց վարել Անտիոքի Առաջնորդութեան Կաթողիկոսական Փոխանորդի իր դերը: Դամասկոսի հայութիւնը մինչեւ 1924 կը կառավարուի Ազգային Միութեան կողմէ, որ կը կոչուի նաեւ Գաղթականաց Յանձնախումբ: 1924ին կը կազմուի թաղական խորհուրդը ու սաղիմապատկան Ս. Սարգիս Վանքի տեսուչը կ'ըլլայ համայնքի հոգեւոր պետը, ինչպէս նախապէս:

Այս երեք տեսչութիւնները շարունակեցին մնալ իրենց վաղեմի սահմաններուն մէջ՝ թեմական հարցեր չստեղծելու համար զգուշութեամբ գործելով գաղթականներու միջավայրին մէջ: Մամուլին մէջ ծայներ կը բարձրանային Սուրիոյ մէջ Հայ Առաքելական Եկեղեցւոյ թեմական իշխանութիւնները վերաբաշխելու ու վերադասաւորելու անհրաժեշտութեան մասին: Հայ Առաքելական Եկեղեցին պատմական առաքելութիւն մը ունէր իր հովանիին տակ առնելու համար իր հօտը ամբողջութեամբ, նախ կարգաւորելու անոր կրթական ու հոգեւոր պետքերը, մանաւանդ զսպելու մարդասիրական նպատակներով «մարդորս»ութիւն կատարող օտար առաքելութիւններու գործունէութիւնը ու ամէն բանէ վեր դասելու ազգային դաստիարակութիւնը, որ գոհացուցիչ չէր նկատուեր հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական վարժարաններու մէջ, որոնց աշակերտութեան կէտը կու գար առաքելական համայնքէն: Ազգային դաստիարակութեան հարցով դժգոհութիւններ կը լսուէին նոյն այդ համայնքներու ժողովրդային շերտերէն:

Թեմական իշխանութիւնները վերադասաւորելու եւ կազմաւորելու գործին մէջ հսկայ աշխատանք կը տանի Հայոց Սահակ Բ. Խապայեան տարագիր կաթողիկոսը: 1928ին Բերիոյ Թեմի գաւառական ընտրութիւններուն կը ներգրաւուին թէ՛ բնիկ եւ թէ՛ գաղթական բոլոր հայերը: 1929ի Մարտին Երուսաղէմի Պատրիարքութիւնը Դամասկոսի տեսչութիւնը կը յանձնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Կը կազմուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդութիւնը, որ կ'ունենայ ազգային սահմանադրական մարմիններ: Թեմին մէջ կը մտնեն Դամասկոս քաղաքը, Մեզզէ, Տումա, Քաթանա, իսկ Ճեպէլ Տրուզի շրջանակէն՝ Քունէյթա, Սուէյտիա, Տրաս, Սալխաթ: 1932ին Կիլիկիոյ

Կաթողիկոսական Ժողովը Դամասկոսի Թեմին կը միացնէ Սալամիէի, Համայի եւ Հոմսի շրջանակները:

1929 Ապրիլին Երուսաղէմի Պատրիարքութիւնը Լաթաքիոյ թեմական իր իշխանութիւնները նոյնպէս յանձնեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: 1932ին ստեղծուեցաւ Անտիոքի Առաջնորդութիւնը, որուն մէջ կը մտնէին Լաթաքիոյ, Թարթուսի, Քեսապի, Սուետիոյ եւ Անտիոքի շրջանները:

Սուրիոյ առաքելական հայութիւնը կը դրուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս երեք թեմերու հովանիին տակ:

Ֆրանսական իշխանութեան առաջին տարիներուն բացուող դպրոցները առհասարակ պաշտօնական արտօնագիր չունէին: Անոնք կը բացուէին ու կը գործէին տուեալ համայնքին, միութեան, կազմակերպութեան կամ անհատներուն կողմէ: Արտօնագրեալ դպրոցը ընդհանրապէս մէկու մը անունով կ'ըլլար՝ ուսուցիչ, տնօրէն կամ հոգաբարձութեան անդամ: Համայնքային դպրոցները արտօնագիր կը ստանային առաջնորդարաններու անունով: 1928ին, յետ Բերիոյ Թեմի գաւառական ընտրութիւններուն, առաքելական համայնքի որոշ դպրոցներ կը յիշատակուին իբրեւ ազգային դպրոցներ, իմա՝ Բերիոյ Թեմի հովանաւորութեան տակ մտած դպրոցներ: Յստակ է, որ շատ դպրոցներ, տակաւին տուեալ թեմի ազգային դպրոցներ չեն նկատուիր: Ստորեւ կու տանք այդ ցանկը՝ ըստ 1927-1928 տարեշրջանի պատկերին<sup>67</sup>.

| դպրոց                         | վայր        | աշակերտ | ուսուցիչ |
|-------------------------------|-------------|---------|----------|
| Ազգ. Հայկազեան Վրժ.           | Հալէպ       | 640     | 29       |
| Ազգ. Մեսրոպեան Վրժ.           | Հալէպ       | 437     | 12       |
| Ազգ. Սահակեան Վրժ.            | Հալէպ       | 110     | 3        |
| Կրթասիրաց Երկսեռ Ազգ. Վրժ.    | Հալէպ       | 550     | 19       |
| Կիլիկեան Գաղթականաց Ազգ. Վրժ. | Հալէպ       | 552     | 20       |
| Չարսանճաքի Ուսումնասիրաց Վրժ. | Հալէպ       | 190     | 7        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Ալեքսանտրէթ | 170     | 9        |
| Նուպարեան Վրժ.                | Ալեքսանտրէթ | 315     | 9        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Պէլլան      | 63      | 2        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Գրրգիսան    | 200     | 5        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Ճարապլուս   | 150     | 5        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Հոմս        | 95      | 3        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Համա        | 30      | 1        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Ազէզ        | 160     | 3        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Պասպ        | 45      | 2        |
| Ազգ. Երկսեռ Վրժ.              | Մումպուճ    | 65      | 3        |

|                  |             |      |     |
|------------------|-------------|------|-----|
| Ազգ. Երկսեռ Վրժ. | Ռասուլ Այն  | 61   | 2   |
| Ազգ. Երկսեռ Վրժ. | Րաքքա       | 70   | 3   |
| Ազգ. Երկսեռ Վրժ. | Արաբ Փունար | 90   | 3   |
| Ազգ. Երկսեռ Վրժ. | Սելիմիէ     | 19   | 1   |
| Ընդհանուր        | 20          | 4275 | 144 |

1931ին, կը հաղորդուի, թէ Սուրիոյ Ֆրանսական Բարձր. Քոմիսէրութիւնը որոշմնագրով մը հաղորդեց Հալէպի Թեմի հայոց առաջնորդին, որ այս վերջինն իրաւասու է իր տեսչութեան տակ առնելու Ազգ. Հայկազեան, Ազգ. Պօղոս Կիլիկենկեան, Ազգ. Մեսրոպեան, Ազգ. Սահակեան, ինչպէս նաեւ թեմական ազգային միւս բոլոր վարժարանները: Հալէպի Կուսակալութեան Կրթական Տեսչութիւնն ալ Մարտ 16 թուակիր գրութեամբ մը կը խնդրէ Ազգ. Առաջնորդարանէն, որ իր հսկողութեան տակ գտնուած հայկական վարժարաններուն երկսեռ աշակերտութեան զումարը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր դասարանի մէջ շաբաթական քանի ժամ ֆրանսերէն աւանդուիլը տեղեկագրէ նոյն կրթական տեսչութեան<sup>68</sup>: Միով բանի՛ ազգային վարժարաններու ցանցին մէջ կը մտնեն հին թէ նոր գաղութի բոլոր ծխական վարժարանները:

Թեմական իշխանութիւնները աւելի մօտէն հսկեցին տեղական թաղական խորհուրդներու, հոգաբարձական եւ դպրոցական պաշտօնէութեան կազմերուն վրայ ու զարկ տուին թեմական սահմաններէն ներս գտնուող բնակավայրերու հայոց կազմակերպման ու դպրոցաշինական գործին: 1928-30՝ բացուեցան բազմաթիւ դպրոցներ յատկապէս Անտիոքի եւ Դամասկոսի թեմերուն մէջ: 1933ին Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդը հայ դպրոցներու համար յատուկ ծրագիր մշակեց, որ կ'ընդգրկէր մանկապարտէզէն սկսեալ բոլոր կարգերու ուսումնական ծրագիրը՝ հայերէնը, հայերէնաւանդ նիւթերը, արաբերէն եւ օտար լեզու, օտար եւ արաբերէն լեզուով դասաւանդելի նիւթերը: Ծրագիրը գործադրուեցաւ մինչեւ 1951: Այդ ծրագիրը պարտադիր էր ոչ միայն ազգային, այլեւ միութենական բոլոր վարժարաններուն համար (Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Կիլիկեան վարժարաններ):

Դպրոցաշինական բուռն ընթացքը կը տեսէ մինչեւ 1940ականները, երբ Թուրքիոյ արեւելեան շրջանէն մեծ թիով քրտախօս հայեր կ'իջնեն Ճեզիրէի շրջանը, Սուրիոյ հիւսիսարեւելեան ծայրամասը, ու աւելի բազմամարդ կը դարձնեն այդ շրջանակը: Մէկը միւսին ետեւէն բացուող դպրոցները մեծամասնութեամբ կը մտնէին Բերիոյ Թեմի ազգային վարժարաններու ցանցին մէջ: Կային նաեւ կաթողիկէ համայնքի շարք մը դպրոցներ:

1939ին տեղի ունեցաւ Ալեքսանտրէթի Սանճաքի պարպումը: Այդ տարին հոն կը գործէին հետեւեալ 28 հայկական դպրոցները.-

### **Ալեքսանտրէթ**

ՀԲԸՄի Ազգ. Նուպարեան Վարժարան

Հայ Աւետ. Մարտիրոսաց Վարժարան  
**Պէլյան,** Միացեալ Վարժարան  
**Սովուք Օլուք,** Ազգային Երկսեռ Վարժարան  
**Ֆարթըսլի,** Հայ Աւետարանական Վարժարան  
**Նարկիզլիք,** Ազգային Վարժարան  
**Աթըք,** Ազգային Վարժարան  
**Գրըգիսան**  
 Ազգային Հայկազեան Վարժարան  
 Հայ Աւետարանական Վարժարան  
 Յիսուսեան Վարդապետներու Վարժարան  
**Սովուք Սու,** Ազգային Վարժարան  
**Չաթալ Թեփէ,** Ազգային Վարժարան  
**Ռիհանիէ,** Ազգային Վարժարան  
**Ասկեր Չայիր (Հայաշէն)** Ազգ. Վարժարան  
**Ապտալ Հիւյիւք (Վարդաշէն),** Ազգ. Վարժարան  
**Հաճի Հապիպլի,** Ազգային Վարդանեան Վարժարան  
**Պիրթիաս,** Հայ Աւետարանական Վարժարաններ  
 Կառավարական նպաստընկալ Ազգային Վարժարան  
**Եողուն Օլուք,** Ազգային Խրիմեան Վարժարան  
 Հայ Աւետարանական Վարժարան  
**Խտրպէկ**  
 Ազգային Վարժարան  
 Քափուչինեան Հայրերու Վարժարաններ  
**Վաքըֆ,** Ազգային Վարժարան  
**Քեպուսիէ,** Ազգային Վարժարան  
**Նոր Չէյթուն,** Ազգային Վարժարան  
**Հայկադաշտ,** Ազգային Վարժարան  
**Անտիոք,** Ազգային Վարժարան  
**Արֆալի,** Ազգային Մեսրոպեան Վարժարան

Սուրիա անցած դպրոցականները կը ցրուին տարբեր դպրոցներ: Ամէն դպրոց ինք կը հոգայ անոնց դպրոցական ծախսերը: Օրինակ՝ Հալէպի Ազգ. Սահակեան Վարժարանն ալ իր դռները կը բանայ Սանճաքէն եկած աշակերտներուն առջեւ: Աշակերտական յատուկ ցանկ մը ցոյց կու տայ 40 հոգի: Ասոնք մեծ մասով Գրըգիսանէն են, մասամբ՝ Ռիհանիէէն, Սովուք Սուէն, Հայաշէնէն, Ալեքսանտրէթէն, Պէլյանէն: Բոլորն ալ ձրիավարժ: Առաջնորդը այս մասին 18 Նոյեմբեր 1938 թուակիր շրջաբերական-հրահանգ մը կը յղէ նաեւ Սահակեան Վարժարանի հոգաբարձութեան՝ գրելով.

Հալէպի Թեմը, որ ինքնին առաւելապէս ծանրաբեռնուած թեմ մըն է եւ չի կրնար նոյնիսկ իր կրթական պէտքերուն բաւարարել, այս օրերս կ'ապրի պատմական դժնդակ շրջան մը:

Ալեքսանդրէթի սանճագին մէջ տարիներէ ի վեր հաստատուած աշխատունակ, ժիր ու բարեկեցիկ Հայութիւնը, ակամայ կը բաժնուի իր տունէն, խանութէն ու արտէն եւ կու գայ Հալէպ հաստատուիլ: Հոս ապաստանողներուն թիւը հետզհետէ կ'աւելնայ եւ Առաջնորդարանի բակը ամէն օր սրտաճմլիկ տեսարան մը կը պարզէ:

Ասոնց մէջ իրական խեղճեր կան, որոնց համար խղճի պարտք է մտածել: Առաջնորդարանը կրցաւ նիւթական նպաստներով փոքր ի շատէ բաւարարել անոնց կարիքները: Ասոնց հիւանդները հիւանդանոց տեղաւորուեցան, ու ջանքեր կ'ըլլան նաեւ մաս մը կարօտ, բայց աշխատելու յօժար կիներ քաղաքիս քանի մը գործարաններուն մէջ տեղաւորել: Կը մնայ ասոնց փոքրիկներուն դպրոց ընդունելու խնդիրը: Ներկայ շրջաբերական հրահանգով ջերմապէս կը խնդրենք Պատ. Հոգաբարձութենէդ, որ նկատի առած վայրկեանին դժնդակութիւնը, Ձեր վարժարանի շրջափակին մէջ գտնուող այս նորեկ գաղթականներուն զաւակները ձրի կամ կիսաթոշակ պայմաններով ընդունիք դպրոց, բաժնելու համար Առաջնորդարանիս պարտականութիւնը, առանց դժկամութեան, այլ սիրայօժար կերպով, ջանալով որ ոեւէ փոքրիկ դուրսը չմնայ եւ չյանձնուի օտարներու խնամքին:

Աղօթարար Առաջնորդ Հայոց Բերիոյ  
Արտաւազդ Արքեպիսկոպոս<sup>69</sup>

Անտիոքի Թեմին Սուրիա մնացած շրջանները՝ Քեսապ, Լաթաքիա, Դեկտ. 18-20 կայացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եպիսկոպոսական ժողովին որոշումով կը միանան Հալէպի Թեմին<sup>70</sup>: Բերիոյ Թեմի շատ ծանրաբեռնուած ըլլալուն համար կը ստեղծուի Ճեզիրէի Փոխանորդութիւնը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան ընդհանուր ժողովը իր 15 Հոկտեմբեր 1941ի նիստին ընդունելով Բերիոյ Թեմի առաջնորդական տեղապահ Զարեհ վարդապետի առաջարկը, Բերիոյ Թեմի Առաջնորդարանի նորոգ հոշակուած Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդութեան Թեմին գահակալ կը նշանակէ Խորէն Վրդ. Բարոյեանը, որ Քամիշլի կը հասնի 6 Մարտ 1942ին ու կը պաշտօնավարէ մինչեւ 14 Հոկտեմբեր 1947: Թեմը կը գործէ մինչեւ այսօր:

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ ՄԻՆՉԵՒ 1946

Հայկական վարժարաններուն, մանաւանդ առաքելական վարժարաններուն մեծագոյն խնդիրը դպրոցի տարեկան պիտոճէի հաւասարակշռումն էր: Հոգաբարձական կազմերը տեղւոյն թաղական խորհուրդներուն հետ համախորհուրդ պէտք է լուծէին դրամական

հարցերը: Ձրիավարժ աշակերտութեան թիւը չափազանց շատ էր, հոգաբարձութիւնը ներքին ձեռնարկներով՝ Ամանորին, Զատկուան ու դպրոցական տարեվերջին տրուած հանդէսներով, թատերական ներկայացումներով, ՀԲԸՄի նպաստներով, ու եթէ ենթահող ըլլար՝ հայրենակցական միութիւններու, այլ կազմակերպութիւններու, անհատ բարերարներու եւ պետական նպաստով կը ջանար պիտոճէն հաւասարակշռել: Իդէպ, ՀԲԸՄը տարեկան նպաստներ կը տրամադրէր աւետարանական, ազգային, միութենական եւ կաթողիկէ ժողովրդապետութիւններու պատկանող բոլոր դպրոցներուն: Աւետարանական եւ կաթողիկէ վարժարանները նպաստատու արտաքին աղբիւրներ ալ ունէին: Շատ ու շատ ազգային դպրոցներ, յատկապէս գիւղական շրջաններու մէջ միշտ բաց կ'ունենային:

1932-34ականներուն Մեծի Տանն Կիլիկիոյ Բարգէն Ա. Աթոռակից կաթողիկոսի հովուապետական այցելութիւնները առաքելական համայնքի կրթական գործը աւելի ամրապնդելու նպատակներ ալ կը հետապնդէր: Կաթողիկոսի միջնորդութեամբ պիտոճեական մեծ խնդիրներ ունեցող ազգային դպրոցները կը հրաւիրուին դրուելու ՀԲԸՄի տեղական մասնաճիւղերու խնամատարութեան տակ ու կը կոչուին ՀԲԸՄի Նպաստընկալ Ազգային Վարժարաններ: Կեդրոնական նշանակութիւն ունեցող, կամ կուսակցական (հնչակեան եւ դաշնակցական) հակակշռի տակ մնացած ազգային վարժարանները չեն մտներ այդ ցանցին մէջ, բայց Միութենէն նպաստ կը շարունակեն ստանալ: 1932ին մեծ թափ կ'առնէր շրջաններու մէջ ՀԲԸՄի մասնաճիւղերու բացումը: Նիւթական ուրիշ աղբիւր չունեցող ազգային վարժարանները կը դրուին տեղական մասնաճիւղերու ամբողջական խնամակալութեան տակ: Անոնք իրենց վրայ կ'առնեն դպրոցի ելեւնուտքի ամբողջ պատասխանատուութիւնը:

Այս կարգադրութիւնը աւելի սուր կերպարանք կու տայ գաղափարական-կուսակցական հակամարտութիւններու, որ արդէն գոյութիւն ունէին դեռ 1920ականներէն: Ատիկա Քեսապի եւ Մուսա Լեռան մէջ բռնկած էր միջհամայնքային, աւատապետական դրդապատճառներով ու վերջապէս զգեցած էր գաղափարական-կուսակցական պայքարի կերպարանք ու հասած եղբայրասպան կռիւներու, մինչ ուրիշ տեղ՝ կ'արտայայտուէր գլխաւորաբար գաղափարական պայքարով ու ահաբեկչական արարքներով, վերջապէս հասնելու համար «յառաջդիմական» ու «պահպանողական», կամ «հայաստանեան» ու «հակահայաստանեան» պիտակումներու: Այս հակամարտութիւնը գաղութային կեանքը պղտորած է գոնէ մինչեւ 1960ականները: Այս մթնոլորտի արձագանգը Հալէպի մէջ հրատարակուող հայ մամուլին առաջնորդող յօդուածներուն մէջ հիմնական տեղ կը գրաւէ (տե՛ս՝ *Եփրատ* (1927-49), *Սուրիա* (1946-60) եւ *Արեւելք* (1946-63) օրաթերթերը): Գաղափարական պայքարը շուտով հասաւ դպրոց, որովհետեւ սփիւռքեան

պայմաններուն մէջ եկեղեցին ու դպրոցը այն երկու հաստատութիւններն են, որով կարելի է զանգուածը կուսակցական հովանիի տակ առնել, ուղղորդել ու շահագործել, անոնցմով մեծնալ:

Թեմական իշխանութիւններու վերահաստատումէն ու Սուրիոյ Հայ Առաքելական Համայնքի երեք թեմերու բաժանումէն անմիջապէս ետք Սուրիոյ հայութեան մէջ գոյութիւն ունեցող գաղափարական տարակարծութիւնները աւելի կը սրեն նկրտումները ու պայքար կ'երթայ ազգային հաստատութիւնները՝ եկեղեցիներն ու դպրոցները կուսակցական տնօրինումին ենթակայ դարձնելու համար: Միջկուսակցական պայքարը ազգային եւ միութենական շրջանակներու մէջ կ'արտայայտուէր տեղական իշխանութիւններու (թաղական խորհուրդ ու հոգաբարձական կազմ) ձեռք ձգելու աշխատանքով, իսկ ամետարանական եւ կաթողիկէ համայնքներուն մէջ կ'արտայայտուէր ազգայնական քարոզչութեամբ, կրթութիւնն ու դպրոցը յարանուանական հովանիէն դուրս բերելու, ազգային դաստիարակութեան աւելի տեղ տալու պահանջքներով:

Այս խմորումները երկփեղկումներու դուռ կը բանան: «Ոչ-յարանուանական» պիտակումով անկախ դպրոց հիմնելու առաջին երկու նախադէպերը ու ազգային վարժարաններու ցանցէն անջատումը կը գտնենք Դամասկոսի մէջ (Ազգային Վարժարանէն անջատուած Միացեալ եւ Զաւարեան վարժարաններ), ապա, 1932էն ետք, ան կը դառնայ ընդհանուր երեսոյթ կարգ մը վայրերու մէջ, մասնաւորաբար՝ ամետարանական եւ ազգային վարժարաններու շրջանակին մէջ: Նպաստընկալ վարժարաններու իրավիճակը ընդվզում կ'առաջացնէ դաշնակցական շրջանակներու մէջ՝ զայն նկատելով հակասահմանադրական եւ միութեան ուղղակի միջամտութիւնը ազգային վարժարաններու գործին: Միւս կողմէ՝ ընդհանրապէս դաշնակցական արեւելումով ազգայնական շարժում մը ծայր կ'առնէ նաեւ ամետարանական համայնքէն ներս՝ կրթութիւնը եկեղեցւոյ հովանիէն դուրս դնելու եւ ազգային դաստիարակութիւն ապահովելու պատճառաբանութեամբ: Այս շարժումը կը տանի բաժանումի: Կը ստեղծուի դաշնակցական հովանաւորութիւնը վայելող դպրոցներու նոր ցանց մը, որուն նիւթական նեցուկ հայթայթելու համար գրեթէ բոլոր բնակավայրերու մէջ կը կազմուին Սուրիահայ Օգնութեան Խաչի մասնաճիւղեր: Այս դպրոցները մեծ մասով Միացեալ կը կոչուէին ու չէին մտներ ազգային վարժարաններու ցանցին մէջ: Այնպէս կը պատահի, որ փոքրիկ բնակավայրեր յարանուանական երեք վարժարաններու կողքին կ'ունենան չորրորդ մըն ալ: Ասիկա 30-40ականներու պատկերն է սուրիահայ դպրոցին: Ասիկա կը նկատեն նաեւ ֆրանսական իշխանութիւնները ու առարկութիւններ կ'ընեն նոր դպրոց հիմնելու ատեն. «Հայք քաղաքականութեամբ կը զբաղին, նոյնիսկ դպրոցներէն կը սկսին զբաղի» կ'առարկէ շրջանի ֆրանսացի

իշխանաւորը Դամասկոսի թեմի կաթ. փոխանորդ Եփրեմ սրբազանին՝ Սուէյտայի մէջ հայկական դպրոց բանալու առնչութեամբ: Դամասկոս այցելող Սահակ կաթողիկոս հարկ կը զգայ պաշտօնապէս հերքելու այս ամբաստանութիւնը՝ ֆրանսական պատուիրակ Լաւասթրին, հաստատելով որ «Մեր ժողովուրդին փոքրիկները իրաւունք ունին սորվելու իրենց մայրենի լեզուն, իրենց մայրենի եկեղեցոյ կրօնքը՝ ու՛ր որ ալ գտնուին»<sup>71</sup>: Կաթողիկոսին համար յայտնի էին հայ ներքին կեանքի բոլոր պառակտումները, բայց անոր համար հայ տարագրութեան դպրոց ապահովելը ամէն բանէ վեր կը մնար:

Սուրիահայ կեանքին մէջ կրթականի կողքին յստակ բեւեռացում կ'ապրին մարզական, բարեսիրական, մշակութային բոլոր միութիւնները: Կարելի է ըսել, որ ՀԵԸ, ՀՄՄ, ՀՄԸՄ մարզական երիտասարդական միութեանց, ՀԲԸՄի եւ ՍՕԽի բոլոր մասնաճիւղերու գոյութիւնն ու գործունէութիւնը պայմանաւորուած էին իրենց պատկանող դպրոցներով: Աւետարանականներն ալ իրենց համայնքի զաւակները պահելու համար զարկ կու տան Ջանից եւ Պատանեաց միութիւններուն, իսկ կաթողիկէները իրենց Ս. Յովսէփ Երիտասարդաց Միութեան մասնաճիւղերուն եւ սկաւտական խումբերուն: Իրաքանչիւր շրջանակ կ'ունենայ իր մարզական, երիտասարդական եւ մշակութային խումբերը, հրատարակութիւնները. իդէպ, այս շրջանին թափ կ'առնէ դպրոցական պարբերականներու հրատարակութիւնը, կը կազմուին շրջանաւարտից միութիւնները: Դպրոցը բնականաբար կորիզ կը դառնար կուսակցական-զաղափարական-համայնքային շրջանակներու:

1920ականներէն մինչեւ 1946, դպրոցաշինական այս բուն ընթացքը մասնակի պարագաներու կը խանգարուի տեղ-տեղ: Օրինակներ՝ շարք մը դպրոցներ կը փակուին Դամասկոսի մէջ 1924ին, արաբ ազգայնականներու ապստամբութեան օրերուն, երբ կը տուժեն Քատէմ ու Հարիքա թաղամասերու հայերը. դպրոցներ կը փակուին նոր տեղաշարժի հետեւանքով, ինչպէս Դամասկոսի մօտ Մեզզէի, հիւսիսի շրջաններուն մէջ Թէլ Սիմէնի, Քալըր ըլ-Պիթի, Մումպուճի, Համամի դպրոցները. կարգ մը բնակավայրերու մէջ տեղւոյն վարժարանէն անջատուած դպրոցները չեն կրնար գոյատեւել, ինչպէս Քէօրքիւնէի Միացեալ (1934-39), Այն Արուսի Անդրանիկ Ծառուկեան (1936-37), Տէր Զօրի Վարդանեան (1936-38), Լաթաքիոյ Հայկազեան (1931-32) եւ այլ վարժարաններ: Աւետարանական համայնքի սկսած դպրոցական գործերը չեն յաջողիր Աֆրիսի, Լաթաքիոյ, Հասիչէի մէջ եւն.:

Որոշ գիւղերու մէջ հաստատուած դպրոցները նաեւ դրացի բնակավայրերու դպրոցներ էին: Երկու-երեք քմ. հեռաւորութեամբ գտնուող գիւղերու դպրոցականները կը յաճախէին միեւնոյն դպրոցը: Այդպիսի գիւղեր շատ կային, Ազէզի, Աֆրիսի եւ մանաւանդ Քամիշլիի շրջակայքը:

Այդուհանդերձ, այդ տասնամեակներուն եղան մեկուսի ու հեռաւոր վայրեր, ուր հաստատուած հայ ընտանիքներ չկրցան դպրոց ունենայ, ինչպէս Թատմորը, Սալխաթը, Սաֆիթան, Մեշթէլ Հլուն են.: Բայց գրեթէ բոլոր վայրերուն մէջ եղան նուիրեալներ, որոնք անձնական նախաձեռնութեամբ հոգացին շրջակայ ընտանիքներու փոքրիկներուն հայերէնի ուսուցման գործը: Այսպէս, Պանիասի հայ գաղութը կը կազմուի 1922ին, երբ կիլիկեան գաղթականներու մեծ թիւ մը կ'իջնէ Լաթաքիա: Գաղութը կապուած է Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ: Գաղութը ազգային վարժարան մը բանալու փորձ կը կատարէ 1928ին, բայց նիւթական դժուարութիւններ արգելք կ'ըլլան անոր յարատեւութեան<sup>72</sup>: 1953ին հոս կան 30 տուն հայեր. կը յիշուի պատահական կերպով գործող կիրակնօրեայ դպրոց մը<sup>73</sup>: Այս գաղութի փոքրիկներուն համար բարիք մը եղած է հոս հաստատուած ՀԲԸՄի վեթերան անդամ Ժոզէֆ (Յովսէփ) Աքիլեանի եւ իր տիկնոջ ներկայութիւնը: Ան տունէ տուն պտտելով հետեւողական ծրագրով ձրիաբար հայերէն գրել ու կարդալ սորվեցուցած է գաղութի մանուկներուն, որոնց թիւը 100ը անցած է: Ահա թէ ինչ կը գրէ անոր մասին Յ. Յարութիւնեան. «Պանիասի մէջ դպրոց եւ եկեղեցի չըլլալուն հետեւանքով ան իր ուսերուն վրայ առած էր հայ մանուկներուն, պարմանիներուն եւ ապա երիտասարդներուն հայերէն սորվեցնելու եւ զանոնք հայկական պատմութեան, եկեղեցիին ծանօթացնելու ծանր պարտականութիւնը: Այս ազգանուէր գործը ան կատարեց շուրջ 25 տարի շարունակ, առանց զանգաւորելու եւ տրտնջալու: Պանիասի ո՛ր հայը չէր տեսած անոր, հովանոցը բռնած անձրեւին տակ, տունէ տուն պտտուիլը, հայ մանուկին հայերէն դասը սորվեցնելու համար»<sup>74</sup>:

1946ին, Սուրիոյ անկախացման եւ ներգաղթի տարին, Սուրիոյ ութսուն բնակավայրերու մէջ (գիւղ, արուարձան, թաղամաս) միաժամանակ կը գործէին 124 հայկական վարժարաններ, որոնք ունէին պատկանելիութեան հետեւեալ պատկերը.- ազգային եւ ազգային նպաստընկալ՝ 67, միութենական (միացեալ, Կիլիկեան, Ուսումնասիրաց, Կրթասիրաց, Զաւարեան)՝ 12, կաթողիկէ (Ժողովրդապետական, Անարատ Յղութեան, Մխիթարեան, Յիսուս-եան, Ֆրանչիսկեան)՝ 24, ատեարանական՝ 15, աղանդաւորական՝ 2, անհատական՝ 2, խառն՝ 2 (Ալեքիփօ Քոլէճ եւ Բեդիեզղա):

Ըստ մակարդակի կային քանի մը անկախ տեսչութիւն ունեցող մանկապարտէզներ, մեծամասնութեամբ նախակրթարաններ էին՝ քառամեայ մանկապարտէզով ու վեցամեայ (հինգամեայ) նախակրթարաններով, կային միջնակարգ բաժին ունեցող դպրոցներ, երկրորդական վարժարաններ, որոնք կեդրոնական դպրոցի իրավիճակ ձեռք բերած էին շրջակայքի նախակրթարաններուն համար: Ալեքիփօ Քոլէճը ունէր համալսարանի ֆրէշմէն եւ սոֆոմոր կարգերը<sup>75</sup>:

|                                   |    |
|-----------------------------------|----|
| Առաքելական նպաստընկալ վարժարաններ | 67 |
| Միութենական վարժարաններ           | 12 |
| Կաթողիկե վարժարաններ              | 24 |
| Աւետարանական վարժարաններ          | 15 |
| Աղանդաւորական վարժարաններ         | 2  |
| Ամհատական վարժարաններ             | 2  |
| Խառն վարժարաններ                  | 2  |

Սուրիոյ հայկական վարժարաններու յարանուանական պատկանելիութեան պատկերը

### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Ալիշան Պայրամեան, *Ալեքսանդրէթի Սանճագի Հարցը Եւ Միջազգային Դիւանագիտութիւնը (1936-1939)*, Անթիլիաս, ՏՄՏԿԿ, 1998, էջ 21:
- <sup>2</sup> Այս շրջանակի առաջին ընդհանուր նկարագրութիւնը տե՛ս՝ Տիգրան Ծ. Խրլոբեան, *Ոսկեմարտեան Հայ Աւետարանական Միութեան, Ա. Հտր.*, Պէյրութ, Տպ. Շնորհոքեան եւ Ա. Տէր-Սահակեան, 1950. նաեւ՝ Գ. Գապպէնճեան, «Սուրիա, Քաղաքական, Կրօնա-Պատմական, Կրթական Եւ Տնտեսական Տեսակէտով», *Տաթեւ Տարեցոյց*, Բ. տարի, Հալէպ, Տպ. Արաքս, Բ. Թօփալեան, 1926, էջ 306:
- <sup>3</sup> Սուեւիոյ գիւղերու պատմութեան, 1915ի հերոսամարտին, տարագրութեան, Փոր-Սայիտ տեղափոխումին ու տունդարձին մասին կայ լայն գրականութիւն. հոս տե՛ս՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուտեան, *Յուշամարտեան Մուսա Լեւան* համահաւաքը, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1970:
- <sup>4</sup> Լաթաքիոյ եւ շրջակայ գիւղերու հին ու նոր շրջանի պատկերի մասին տե՛ս՝ Զաքարիա Վարդապետ, «Լաթաքիոյ Հայաբնակ Գիւղօրից Ստորագրութիւնը Եւ Գիւղացոց Արդի Վիճակը», *Միօն*, թիւ 7, 1 Յուլիս 1866, էջ 97-103. նաեւ՝ Գրիգոր Տունկեան, *Նիւթեր Լաթաքիոյ Եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան*, Հրատ. Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի, Հալէպ, Տպ. Շարք, 1983:
- <sup>5</sup> Մովսէս Շահպազեան, *Հայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920)*, Սուրիա-Քեսապ, 1965. նաեւ՝ Ալպէո Ս. Թեմիրեան, *Քէսապ (1909-1946)*, Պէյրութ, 1956. նաեւ՝ Յակոբ Զօլաքեան, *Քեսապ, Ա. Հտր. (Տեղագրութիւն, Բնակավայրեր, Բնակչութիւն, Պատմութիւն, Տնտեսութիւն)*, Հալէպ, Տպ. Արեւելք, 1995:
- <sup>6</sup> Այս եւ վերի երկու շրջանակներու պատմութեան մասին տե՛ս՝ Յակոբ Զօլաքեան, *Անպիտոյ Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը, Պատմաազգագրական Ուսումնասիրութիւն*, Անթիլիաս, ՏԿԿՄՏԿ, 2006:
- <sup>7</sup> Անտիոքի եւ վերոյիշեալ հայ շրջանակներու հայ հին գաղթականութեան ու անոր մնացորդացին մասին տե՛ս՝ Արշակ Ալաօյանեան, *Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Ա. Հտր.*, Գահիրէ, Տպ. Սահակ Մեսրոպ, 1941. Բ. Հտր., Գահիրէ, Տպ. Նոր Աստղ, 1955. նաեւ՝ *Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի Նահանգը* եւ Հայերը, Գահիրէ, Տպ. Նոր Աստղ, 1960. նաեւ՝ Կոմմագենացի (Վեր. Եղիա Ս. Քասունի), *Փիլարտոս Հայը*, Հալէպ, Տպ. Գոլէճ,

1930. նաեւ՝ Բակուրան (Վահան Մ. Քիրքճեան), *Մի Տեսութիւն Կիլիկիոյ Հայկական Իշխանութեան Կրայ*, Բ. տպագրութիւն, Պէյրութ, Տպ. Սեւան, 1959. նաեւ՝ Բիւզանդ եղիայեան, *Ժամանակակից Պարմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972*, Անթիլիաս, ՏՄՏԿԿ, 1975. նաեւ՝ «Սուրիոյ եւ Լիբանանի Հայերը», *Հայաստանի Կոչնակ*, 1948, թիւ 29, էջ 677-679. նաեւ՝ Երուանդ Հ. Քասունի, *Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը Մերձատր Արեւելքի Քաղաքական Հոլովոյթին Մէջ* (1080-1137), Պէյրութ, Տպ. Ատլաս, 1974. նոյնէն՝ «Խաչակիրներ Անտիոքի Դիմաց (էջ Մը Հայ-Խաչակրական Յարաբերութեան Պատմութենէն)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Պէյրութ, 1970, էջ 61-73. նաեւ՝ «ԺԱ. Դարու Անտիոքի Հայ Կառավարիչներ Պեխտ-Խաչատուր եւ Վասակ Պահլաւունի», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Պէյրութ, 1971, էջ 123-134. նաեւ՝ Զօլաքեան, *Անտիոքի Մերձակայ Ռուծի: Այդ շրջանակին, ինչպէս եւ Հալէպի եւ Դամասկոսի հայ գաղութներու նախաեղեռնեան ընդհանուր պատմութեան մասին տե՛ս՝ Արտաւազդ Արք. Սիրմէեան, Պարմութիւն Հալէպի Հայոց, Գ. Հոր., Փարիզ, Տպ. Արաքս. նաեւ՝ Avedis K. Sanjian, *The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion*, Harvard University Press, 1965. նաեւ՝ Յովհաննէս Թովուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախների Պարմութիւն (1841-1946)*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1986:*

<sup>8</sup> Ա. Մ. Արմատունի, «Հայ Կեանքը Ազգի Մէջ», *Եփրատ օրաթերթ*, Հալէպ, 10 Օգոստոս 1932. նաեւ՝ Սարգիս Ղազարեան, *Հայկական Փոքր Գաղութներ*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1965:

<sup>9</sup> Այս շրջանակի մասին նիւթեր ունին՝ Անստորագիր, «Նորահաստատ Հայ Գիւղ Մը Եւ», *Եփրատ*, 2 Յունիս 1928. նաեւ՝ Խ. Պ. Քարտաշ, «Հայաշէն Գիւղին Անյետաձգելի Հարցը», *Եփրատ*, 22 Սեպտեմբեր 1928. նաեւ՝ Անստորագիր, «Հալէպահայ Տարին 1927-1928, Նորաշէն Գիւղեր», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Կարի*, 1929, Պէյրութ, Տպ. Ազդակ, էջ 192. նաեւ՝ Անստորագիր, «Տարագրելոց Խնդիր, Սողոմ Սուի Գիւղացիները», *Եփրատ*, 19 Փետրուար 1930. նաեւ՝ Անստորագիր, «Կեանքը Ռիհանիէի մէջ», *Եփրատ*, 31 Յունուար 1931. նաեւ՝ Խրլորեան, *Ոսկեմարտեան, Ա. Հոր.*, էջ 331. նաեւ՝ Սիրմէեան, *Պարմութիւն Հալէպի*, էջ 97-98. նաեւ՝ Պարգեւ Նազարեան, «Հայ Գաղութը՝ Ռիհանիէ», *Գեղարդ Տարեգիրք, Ե. Գիրք*, 1996, Հալէպ, էջ 117-118. նաեւ՝ Լեւոն Նորաշխարհեան, «Նոր Զէյթուն», Գուշագճեան եւ Մատուեան, էջ 111:

<sup>10</sup> Անստորագիր, «Լաթաքիոյ Հայ Գաղութը», *Սուրիահայ Տարեցոյց*, 1925, Բ. տարի, էջ 217. նաեւ՝ Արշակ Ալաօյաճեան, «Հայ Գաղութներու Ներկայ Կացութիւնը», *Հայաստանի Կոչնակ*, 19 Յունուար 1929, էջ 73:

<sup>11</sup> Ոստայնակ, «Հոն», *Զարթօնք* (Ալեքսանտրէթ), 1924, թիւ 11. նաեւ՝ Ալաօյաճեան, «Հայ Գաղութներու Ներկայ Կացութիւնը», *Հայաստանի Կոչնակ*, 19 Յունուար 1929, էջ 72-75. նաեւ՝ Բիւզանդ եղիայեան, «Հայեր Սուրիոյ եւ Լիբանանի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 1948, թիւ 31, էջ 72 8-729:

<sup>12</sup> Հիւլաւաններու մէկ պատկերը՝ ըստ Վեր. Շիրաճեանի տեղեկագիրին՝ տե՛ս՝ Թամըս Կրինշիլոս, «Հայ Գաղթականներու Տեղաորումը Հալէպի Մէջ, 1922-1939», *Գեղարդ Տարեգիրք, Բ. Գիրք*, 1976-1978 միացեալ թիւ, Հալէպ, Տպ. Շարք, էջ 253:

<sup>13</sup> «Փոքր Ասիան Առանց Քրիստոնեայի», *Հայաստանի Կոչնակ*, 20 Յունուար 1923, էջ 79բ:

- <sup>14</sup> Կրինշիլտս, էջ 253:
- <sup>15</sup> *Եփրատ*, 10 Մայիս 1930:
- <sup>16</sup> «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 2 Փետրուար 1932, էջ 557:
- <sup>17</sup> James Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Presented by Viscount Grey of Falloden by Viscount Bryce*, Uncensored Edition, ed. and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Great Britain, 2000, վաւերագիր թիւ 143, էջ 564-567:
- <sup>18</sup> Նոյն, վաւերագիր թիւ 139, էջ 550:
- <sup>19</sup> «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, համապատասխանաբար՝ 23 Յունիս 1923, էջ 794բ. 21 Յուլիս 1923, էջ 919բ:
- <sup>20</sup> Այս շրջանակի մասին նիւթեր ունին. Թղթակից, «Հայ Կեանքը Դամասկոսի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 2 Փետրուար 1924, էջ 146. նաեւ՝ Անստորագիր, «Վիճակագրական Ծանօթութիւններ Դամասկոսի Անցեալի Եւ Ներկայի Մասին», *Սուրիահայ Տարեցոյց, Բ. Տարի*, էջ 257. նաեւ՝ «Դամասկոսի Վերջին Դէպքը, Խմբագրական», *Սուրիահայ Մամուլ*, 25 Հոկտեմբեր 1925. նաեւ՝ «Երկու Կարեւոր Փաստաթուղթեր», *Սուրիահայ Մամուլ*, 20 Յունուար 1926. նաեւ՝ Սուրէն Վրդ. Քեմհաճեան, «Դամասկոսի Հայոց Սուրբ Սարգիս Վանքը Եւ Հին Ու Նոր Գաղութիւնը», *Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի*, էջ 219. նաեւ՝ *Դամասկոսի Միացեալ Վարժարանի Քսանհինգամեայ Յօրելեան (1929-1954)*, Հալէպ, 1956, Տպ. Արեւելք. նաեւ՝ P. Pierre Atamian, *Histoire de la Communauté Armenienne de Damas*, Beyrouth, 1964:
- <sup>21</sup> Այս մասին կարողալ հատորին մէջ Յ. Պարանի յօդուածը:
- <sup>22</sup> Այս շրջանակին մէջ հայերու վերաբնակեցման ու նոր գիւղեր հաստատելու մասին տե՛ս՝ Յակոբ Զօլաքեան, *Քարէն Եփփէ Հայ Գողգոթային Եւ Վերածնունդին Հեղ*, 2001, Հալէպ, Տպ. Արեւելք, էջ 105-134. նաեւ՝ Ն. Նարկիզեան, «Ազգային Կեանքը Ճարապալուսի Մէջ», *Եփրատ*, 13 Մարտ 1949. նաեւ՝ Անցորդ, «Թէլ Ապիատ», *Արեւելք օրաթերթ*, 20 Մայիս 1947:
- <sup>23</sup> \*, «Տէր Զօրի Կեանքէն», *Եփրատ*, 1927, թիւ 37. նաեւ՝ Մկրտիչ Թերզեան, «Եկեղեցի Եւ Դպրոց Եփրատի Անապատային Ափերուն Վրայ», *Եփրատ*, 12 Դեկտեմբեր 1931. նաեւ՝ Ղ. Տէր Ղազարեան, «Քրդախօս Հայերու Մէջ», *Նոր Աւերաբեր*, 1934, թիւ 10. նաեւ՝ Գրիգոր Մ. Լուսեան, «Հայերը Հիւսիսային Սուրիոյ Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 5 Սեպտեմբեր 1936, էջ 855. նաեւ՝ Ա. Բախտիկեան, «Հայ Դպրոցը Քամիշլիի Մէջ», *Արեւելք Օրաթերթ*, 25 Մարտ 1947. նաեւ՝ Ծորճ Զամիչեան, «Ճեզիրէի Հայութիւնն Ու Հայ Վարժարանները», *Տեղեկագրու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի, Պրակ Բ-Գ*, Ապրիլ, 1951. նաեւ՝ Անստորագիր, «Կեանքը Քամիշլիի Մէջ», *Արեւելք*, 29 Հոկտեմբեր 1948. նաեւ՝ Պատ. Պարգեւ Օրջանեան, «Քամիշլիի Հայ Աւետ. Համայնքը», *Գեղարդ Տարեգիրք, Բ. Գիրք*, էջ 373:
- <sup>24</sup> *Եփրատ*, 9 Նոյեմբեր 1927:
- <sup>25</sup> Կիրակոս Գրիգորեանի վկայութիւնը, անգլերէն, մեքենագիր, երկու էջ, *Հայ Գաղթականաց Կեդրոնական Յանձնախումբի Տեղաւորման Յանձնախումբի Թղթապանակ*, անձնական արխիւ:
- <sup>26</sup> Նոյն, Հալէպ, 12 Փետրուար [1]930 թուակիր փաստաթուղթ. հայերէն, մեքենագիր, երկու էջ:
- <sup>27</sup> Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբին անդամ Եւ Տեղաւորման Յանձնախումբի ատենապետ Վեր. Շիրաճեան մեծ վաստակ ունի

Սուրիոյ մէջ հայ գաղթականները տեղաւորելու գործին մէջ: Ան է փաստօրէն գաղթականները ընդունողը, տեղաւորողը, նպաստներ հայթայթողն ու բաշխողը, բնակավայրերու տեղը որոշողը, գնողը, տուներու կառուցման հսկողը եւն.: Շիրաճեան բոլորին հետ կապուած թղթակցութիւնները, արձանագրութիւնները, պայմանագիրերը, հազարաւոր առանձին նիւթեր հաւաքած է յատուկ թղթապանակներու մէջ իբրեւ Տեղաւորման Յանձնախումբի արխիւ: Մեծ կարեւորութիւն կը ներկայացնեն 1930-1939ականներու այն փաստաթուղթերը, որոնք կապ ունին Սղերդի, Տիգրանակերտի եւ Բալուի կողմէն, յատկապէս Պշերիկէն, այդ տարիներուն գաղթած հայոց:

<sup>28</sup> Նոյն, *Վեր. Ա. Շիրաճեանի 31-3-1930 թուակիր տեղեկագիրը*, անգլերէն, ձեռագիր 11 էջ:

<sup>29</sup> Նոյն:

<sup>30</sup> Օրջանեան, «Քամիշլիի Հայ Աւետ. Համայնքը», էջ 374:

<sup>31</sup> Հայ Գաղթականաց Խնամատարութեան Կեդրոնական Յանձնախումբի Տեղաւորման Յանձնախումբի թղթապանակ, *Վեր. Ա. Շիրաճեանի 31-3-1930 թուակիր տեղեկագիրը*, անգլերէն, ձեռագիր 11 էջ:

<sup>32</sup> Տե՛ս նաեւ՝ Յակոբ Ճղեան, *Սփռուելու Մնացած Կեանք*, Երեւան, 1991:

<sup>33</sup> Նախլէ Ուարտ, *Հարարաթ Անթաքիա Ապր ալ-Ուսուր*, Սան Փաուլօ, 1956, էջ 235-236 (արբ.). նաեւ՝ Պայրամեան, էջ 21. նաեւ՝ Մարտիրոս Գուշագճեան, «Մուսալեոցիք Այնճարի Մէջ»՝ Գուշագճեան եւ Մատուտեան, էջ 498-500:

<sup>34</sup> «Շաքաթական Քոռնիկ», *Հայաստանի Կոչնակ*, 23 Յունիս 1923, էջ 794բ:

<sup>35</sup> «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 21 Յունիս 1923, էջ 919բ:

<sup>36</sup> «Հայ Գաղթականութիւնը», *Հայաստանի Կոչնակ*, 14 Ապրիլ 1923, էջ 469ա:

<sup>37</sup> Հաւանաբար նկատի ունի ՎաքըՖ գիւղը. Գապագլին նախապէս թրքաբնակ գիւղ էր, ուր յետոյ կու գան հաստատուելու զէյթունցի գաղթականներ. կը կոչուի Նոր Զէյթուն:

<sup>38</sup> «Սուրիահայոց 1923-ի Ամփոփ Վիճակագրութիւնը», *Սուրիահայ Տարեցոյց, 1924, Ա. Տարի*, պատր.՝ Մ. Աճէմեան, Մ. Սիսեռեան, Ե. Ոսկերիչեան, Գահիրէ, Տպ. Զարեհ Պէրպլերեան, 1924, էջ 237-238:

<sup>39</sup> «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 21 Յունիս 1923, էջ 919-920:

<sup>40</sup> «Գաղութներ», *Հայաստանի Կոչնակ*, 10 Մարտ 1928, էջ 313բ:

<sup>41</sup> Զօլաքեան, *Քեսապ, Ա. Հոր.*, 119:

<sup>42</sup> «Տեղեկութիւններ Սուրիոյ Հայ Գաղթականութեան Մասին», *Հայաստանի Կոչնակ*, 17 Նոյեմբեր 1923, էջ 1459ա:

<sup>43</sup> «Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 2 Ապրիլ 1921, էջ 486բ. նաեւ՝ Գուշագճեան եւ Մատուտեան, էջ 486ա:

<sup>44</sup> *Ոսկեմարտեան, Ա. Հոր.*, էջ 342: Հեղինակը դպրոցները կը վերագրէ ՀԲԸՄի:

<sup>45</sup> Յակոբ Զօլաքեան, *Ութսունամեակ Հայկաի Ազգային Սահակեան Վարժարանի (1927-2007)*, Հալէպ, 2007, էջ 13:

<sup>46</sup> Գուշագճեան եւ Մատուտեան, էջ 486բ:

<sup>47</sup> «Վիճակագրութիւն Ճէպէլ Մուսայի Հայ Գիւղերուն», *Սուրիահայ Տարեցոյց, Բ. Տարի*, էջ 242:

<sup>48</sup> *Նոր Աւերաբեր*, 1929, թիւ 12, էջ 376, թիւ 13, էջ 411-412:

<sup>49</sup> Յ. Կիւրլէքեան, «Պէլլանի Կեանքէն», *Հայաստանի Կոչնակ*, 29 Փետրուար 1936, էջ 207. նաեւ՝ *Նոր Աւերաբեր*, հայատառ, 1931, թիւ 20, էջ 476:

<sup>50</sup> Յ. Կիւրլէքեան, «Պէլլան Աւանը», *Հայաստանի Կոչնակ*, 16 Մարտ 1935, էջ 254:

- <sup>51</sup> «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 23 Օգոստոս 1930, էջ 1083ա. նաեւ՝ Մ. Պէլլէրեան, «Կեանքը Սուետիոյ Լեռնաշխարհին Մէջ», *Սուրիահայ Մամուլ*, 6, 11 եւ 13 Նոյեմբեր 1925:
- <sup>52</sup> Մ. Արամայիս, «Հայ Կեանքը Դամասկոսի Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 10 Նոյեմբեր 1923, էջ 1431. նաեւ՝ Սիրական Օրջանեան, «Տպաւորութիւններ Դամասկոսի Վրանաքաղաքի Այցելութենէն», *Սուրիահայ Մամուլ*, 3 Յուլիս 1925. նաեւ՝ Անստորագիր, «Վիճակագրական Ծանօթութիւններ Դամասկոսի Անցեալի Եւ Ներկայի Կեանքէն», *Սուրիահայ Տարեցոյց*, Բ. տարի, 1925, էջ 254-255. նաեւ՝ Գապպէնճեան, էջ 256. նաեւ՝ Անստորագիր, «Սուրիոյ Եւ Լիբանանի Հայոց Վիճակագրութիւնը», *Սուրիական Ալպոմ*, Գ. Տարի, 1929, էջ 110:
- <sup>53</sup> Չօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան*, էջ 11-20:
- <sup>54</sup> Նոյն, էջ 14-15:
- <sup>55</sup> Չօլաքեան, *Քեսապ, Ա. Հտր.*, էջ 245:
- <sup>56</sup> Լեւոն Յ. Լեւոնեան (1884-1943) ամարտած է Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Քոլէճը: Զինադադարէն ետք կը դառնայ Այնթապ, ուր կը վերակազմէ Ոսումնասիրաց Երիտասարդական Ընկերակցութիւնը (հիմնուած 1905ին), որ Այնթապի ինքնապաշտպանութեան կորիզներէն, իսկ ինք զինուորական ղեկավարներէն մէկը կ'ըլլայ: 1922էն ետք Հալէպի մէջ վերակազմուած Ոսումնասիրաց Ընկերակցութեան նախագահն է, իսկ 1925էն ետք Ոսումնասիրաց Վարժարաններու տէրն ու տնօրէնը: Լեւոնեանի գլխաւորած գործը առաջին իսկ օրէն կ'ունենայ հակառակորդներ: 1943 սպանուած կը գտնուի իր դպրոցին մէջ: Արամ Շորվօլեան այսպէս կը գրէ. «Տարիներ ետք, *Էմմանուէլ Եկեղեցոյ մէջ, Ոսումնասիրացի դէմ նախ պաղղութիւն, ապա հալածանք սկսաւ: Ոսումնասիրացի հետք վէճին արմատները գոցէ հինէն, Այնթապի Ա. եւ Բ. Եկեղեցիներու միջեւ եղած հարցերուն կապուած էին*» (Արամ Շորվօլեան, «Կիսադարեան Յուշեր Հայ Աւետարանական Կեանքէ», *Ջանասէր*, 1974, թիւ 17-24, էջ 380):
- <sup>57</sup> Միութեան ու անոր դպրոցական ցանցին մասին տե՛ս՝ Սիրել Եւ Ծառայել (Լեւոն Յ. Լեւոնեան, *Մշակը Եւ Իր Հունձքը*), Խմբ.՝ Լեւոն Վարդան, Պէյրուֆ, Տպ. Սեան, 1960, 112 էջ:
- <sup>58</sup> Անարատ Յղութեան Քերց Սուրիոյ դպրոցներուն մասին տե՛ս՝ Յովհաննէս Արք. Նազլեան, *Պարմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան*, Պէյրուֆ, Կաթողիկէ Տպարան, 1948:
- <sup>59</sup> Սուրիոյ հայ ամետարանական համայնքներու մասին տե՛ս՝ Խրլորեան, *Ոսկեմարտեան*:
- <sup>60</sup> Յակոբ Չօլաքեան, «Ալեքիօ Գոլէճ», *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, 1996, էջ 356-364:
- <sup>61</sup> «Միացում Երկու Եկեղեցիներու», *Ջանասէր*, ԻԵ. Տարի, 15 Յուլիս 1962, էջ 212:
- <sup>62</sup> Այդ մասին կը պատմեն Քեսապի ամետարանական եկեղեցիներու եւ Հալէպի Սթասիոնին թղթակցութիւնները (Յակոբ Չօլաքեան, *Քեսապ, Գ. Հտր.*, «Ազգայնական Շարժումը Հայ Աւետարանական Համայնքին Մէջ» հրատարակումներու բաժինը, էջ 411-461):
- <sup>63</sup> Վարդան Վ. Թէքէեան, «Նոր Թեմեր Ու Նոր Վիճակաւորներ», *Աւերիք*, 1954, թիւ 11-12, էջ 186:
- <sup>64</sup> «Թեմերէ Եւ Այլ Լուրեր», *Աւերիք*, 1943, թիւ 5-8, էջ 47. նաեւ նոյն՝ 1954, թիւ 11-12, էջ 186:

- <sup>65</sup> Տրթ. Յակոբ Թօփճեան, «Հայութիւնը Սիրիոյ Մէջ, Բ.», *Հայաստանի Կոչնակ*, 14 Յուլիս 1928, էջ 874բ:
- <sup>66</sup> «Գաղութներ», էջ 313բ:
- <sup>67</sup> *Տաթևի Տարեգիրք*, Ե. Տարի, Հալէպ, Տպ. Արաքս, 1929, էջ 388:
- <sup>68</sup> «Հայ Ազգային Կեանք», *Հայաստանի Կոչնակ*, 2 Մայիս 1931, էջ 572ա:
- <sup>69</sup> Զօլաքեան, *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան*, էջ 124-125:
- <sup>70</sup> Վարդան Եպս. Տեմիրճեան, *Գաազանագիրք Լիբանանի Եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան, Ա. Հտր.*, էջ 327-328. նաեւ՝ *Հասկ*, 1939, թիւ 11-է-թ, էջ 175:
- <sup>71</sup> Անստորագիր, «Դամասկոսի Թեմի Գործերը», *Հասկ*, 1934, Հոկտեմբեր, էջ 82բ:
- <sup>72</sup> Պ. Զպուքճեան, «Ալաուիթ Պետութեան Հայերը», *Սուրիահայ Տարեգիրք*, Ա. Տարի, էջ 139:
- <sup>73</sup> «Լրատու Հայ Աւետ. Եկեղեցիներու», *Ջանասէր*, ԺԶ. Տարի, 1 Փետրուար 1953, էջ 94:
- <sup>74</sup> *Խօսնակ*, Պէրյութ, 1960, Գ. Տարի, պրակ 2. (Ի.), էջ 197:
- <sup>75</sup> Ցանկը պատրաստուած է յետ մեր երկամեայ ուսումնասիրութեան, ուր տպագիր, արխիւային եւ դաշտային նիւթերու հիման վրայ շարադրած ենք բնակավայրերու եւ այնտեղ գործած դպրոցներու նկարագրութիւնը: 1946էն առաջ նման ամբողջական ցանկի մը չենք հանդիպած:

**The Settlement of the Survivors from the Genocide in Syria and the  
Organization of the Syrian-Armenian Education and School Network (1918-1946)**  
(Summary)

Hagop Cholakian  
hagopcholakian@hotmail.com

After WWI Armenian refugees settled in Syria in four stages: a) after the departure of the Ottoman armies, Armenians returned to their native areas which fell within the borders of Syria. Thirty-two Armenian localities were thus revived, including Aleppo and Damascus; b) after the retreat of the French forces from Cilicia, Aintab and Ourfa, a new outflow took place, and these refugees generally settled in the western areas of Syria; c) between 1927 and 1932 a new wave of refugees from the areas of Diarbakir and Bitlis (mainly Kurdish speaking) settled in Ras Ul Ayn, Hasake, and the vicinity; d) with the ceding of Alexandretta to Turkey a new wave of refugees poured into Latakia, Aleppo, Damascus and Lebanon. The repatriation of 1946-47 was followed by a flow from rural to urban areas, to Lebanon and abroad.

The paper covers the conditions during the establishment of these settlements intertwined with the evolution of the Syrian Armenian schools until the late 1940s. The article analyses the nature of these schools, their educational level, their founding organizations/institutions, the denominational communities sponsoring them, their networking, the jurisdiction they were put under, the development of secondary schools and the contribution they made to the Armenian community of Syria.